ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

ԵՊՀ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Համալսարանների ժուռնալիստիկայի ֆակուլտետների համար

äñ³Ï 2

Համալսարանների ժուռնալիստիկայի ֆակուլտետների համար նախատեսված ուսումնական ծրագրերի առաջին ժողովածուն Երեւանի մամուլի ակումբը ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի հետ համատեղ լույս է ընծայել 2002 թվականին: Սա այդ շարքի երկրորդ պրակն է, որում ընդգրկված են ինչպես ԵՊՀ դասախոսների, այնպես էլ ԵՄԱ փորձագետների մշակած ուսումնական ծրագրերը: Ժողովածուի համար ընտրված ծրագրերը ընդգրկում եւ մանրամասնում են տվյալ առարկայի բոլոր հարցերը՝ հնարավորություն տալով, որպեսզի այլ բուհում աշխատող մասնագետը եւս կարողանա օգտվել դրանցից:

Առաջիկայում ԵՄԱ-ն կիրատարակի նաեւ ժողովածուի երրորդ պրակը:

**Ժողովածուն հրատարակվում է Երեւանի մամուլի ակումբի՝ «Ռեսուրսների զարգացումը ազատ եւ որակյալ լրատվամիջոցների համար» ծրագրի շրջանակներում:**

**Ծրագիրն իրականացվում է Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ:**

Ծրագրի ղեկավար՝ **Բորիս Նավասարդյան**

Խմբագիր՝ **Մեսրոպ Հարությունյան**
Համակարգչային էջադրումը եւ ձեւավորումը՝ **Նարա Մենդելյանի**

**Տպագրության է երաշխավորել ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի խորհուրդը**

ºñ»õ³Ý 2005

# ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

*Հեղինակ՝ **Ժաննա ՄԽԻԹԱՐՅԱՆ***
*ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի*
*մամուլի պատմության եւ տեսության ամբիոնի դասախոս*

Ծրագրի նպատակն է ուսանողներին ծանոթացնել 19-րդ դարի հայ հասարակական հոսանքների պատմությանը, նրանց առաջացման պատճառներին եւ հանգամանքներին, բարձրացրած հիմնախնդիրներին եւ ստեղծած պարբերականների գործունեությանը:

Դասընթացը պետք է օգնի ուսանողներին յուրացնելու հետեւյալ հիմնական խնդիրները.

1. Հայ հասարակական հոսանքների ձեւավորումը, նրանց աշխարհագրությունը,
2. Հայ հասարակական հոսանքների խոսափող պարբերականների դասակարգումը, առանձնահատկությունները,
3. Ամփոփ պատկերացում հայ հասարակական հոսանքների հայտնի պարբերականների մասին: Մամուլի եւ հրապարակախոսության դերը ժողովրդի կյանքում,
4. Խմբագիրները, նշանավոր թղթակիցներն ու աշխատակիցները, բանավեճը,
5. Կապը հասարակության հետ եւ ազդեցությունը նրա վրա:

## Ներածություն

Դասընթացի առարկան, խնդիրները:

Հայ ժողովուրդը XIX դարասկզբին: Հայկական գաղթավայրերը, հայ մշակույթի օջախները՝ Վենետիկ, Հնդկաստան, Թիֆլիս, Կ.Պոլիս, Զմյուռնիա, Դորպատ, Մոսկվա, Պետերբուրգ:

Կ.Պոլիսն ու Թիֆլիսը հայ հասարակական-քաղաքական, կրթական ու մշակութային կյանքի կենտրոններ:

Հայ հասարակական մտքի կազմավորումն ու շերտավորումը (Արշարունյաց, Արամյան, Համազգյաց, Արարատյան եւ այլ ընկերություններ): Նրանց խնդիրները եւ նպատակները: Հասարակական գործունեության մեջ հայ կաթոլիկ եւ լուսավորչական գործիչների դերը (հասունյաններ եւ հակահասունյաններ):

1840-ական թվականները՝ հայ հասարակական ու մշակութային կյանքի բեկման տարիներ:

Ռուսաստանի եւ եվրոպական երկրների ազդեցությունը Անդրկովկասի եւ Թուրքիայի տնտեսական, հասարակական եւ քաղաքական կյանքի վրա:

19-րդ դարի առաջին կեսի հայ պարբերականները: Մամուլի դերը հասարակական մտքի ձեւավորման գործում:

## Գրականություն


1. Լեո, հ.6, Երեւան, 1987:
2. Հայ ժող. պատմ., հ.3, Երեւան, 1967:
3. Ղազարյան Հ., Արեւմտահայերի սոցիալ-տնտեսական եւ քաղաքական կացությունը 1800- 1870-ական թվականներին, Երեւան, 1967:
4. Ղուկասյան Վ., Պոլսահայ մամուլի եւ հրապարակախոսության սկզբնավորումը, Երեւան, 1975:
5. Հակոբյան Թ., Երեւանի պատմությունը, (1800-1879թթ.), Երեւան, 1959:
6. Մխիթարյան Մ., Արեւելահայ մամուլի սկզբնավորումը եւ լուսավորական շարժումը (19-րդ դարի 1-ին կես), Երեւան, 1994:
7. Խառատյան Ա., Հասարակական միտքը Զմյուռնիայի հայ մամուլում, (1840- 1900), Երեւան, 1956,1960:


## ԹԵՄԱ 1.
## Հայության սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական վիճակը:

### Հայ հասարակական հոսանքների ձեւավորումը

1850-ական թվականներ: Արեւելահայերի եւ արեւմտահայերի սոցիալ-տնտեսական, քաղաքական տարբեր կացությունները:

Արեւելյան ճգնաժամը: Ղրիմի պատերազմը եւ նրա ազդեցությունը հասարակական տարբեր հոսանքների ձեւավորման վրա:

Հայ ժողովրդի ազգային-հասարակական զարթոնքը: Լուսավորությունը որպես հայ ազգի բարոյական եւ նյութական վերածնություն: Նոր գրական լեզվի խնդիրը, գրապայքար: Աշխարհաբարը պաբերական մամուլի լեզու: Հասարակական մտքի ուղղությունները, հասարակական հոսանքների ձեւավորումը (կղերա-ֆեոդալական, կղերա-ամիրայական՝ ազգային-պահպանողական, լիբերալ-բուրժուական, ազգային-դեմոկրատական): Նրանց խոսափող պարբերականները:

Մամուլը հասարակական հոսանքների ղեկավար, ուղղորդող ուժ: Կղերա-ֆեոդալական հոսանքը արեւելահայերի, կղերա-ամիրայականը՝ արեւմտահայության հասարակական, մշակութային եւ քաղաքական կյանքում: Հասարակական իրողությունների կամայական մեկնաբանությունները կղերական, հետադիմական «Հայաստան»(1846-1852), «Արշալույս Արարատյան» (1840-1887), «Ճռաքաղ»(1858-1862), «Երեւակ»(1857-1866), «Մասյաց աղավնի» (1855-1858, 1860-1865), «Մեղու Հայաստանի»(1858-1863) պարբերականներում:

## Գրականություն


1. Ղազարյան Հ., Արեւմտահայերի սոցիալ-տնտեսական եւ քաղաքական կացությունը 1800-1870թթ., Երեւան, 1967:
2. Ներսիսյան Մ., Հայ ժող. ազատագրական պայքարը թուրք բռնապետության դեմ, Երեւան, 1967:
3. Ղուկասյան Վ., Պոլսահայ մամուլի եւ հրապարակախոսության սկզբնավորումը, Երեւան, 1975:

4. Պարսամյան Վ.,Հայ ժող. պատմ., հ.3, Երեւան, 1967:
5. Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը եւ նրա ժամանակը, Երեւան,1955, հ.1:
6. Խառատյան Ա., Հասարակական միտքը Զմյուռնիայի հայ մամուլում, (1840-1900), Երեւան, 1956,1960:
7. Կարինյան Ա., Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ.1, Երեւան, 1956:

## ԹԵՄԱ 2.
## Հասարակական հոսանքների հակամարտությունը

Արեւելահայ լիբերալ-բուրժուական հոսանքի գաղափարաբանությունը: Ստեփանոս Նազարյանցը լուսավորության, լեզվի, կրոնա-դավանաբանության եւ այլ խնդիրների մասին:

Արեւմտահայ լիբերալիզմը. Նիկողայոս Զորայան, Նահապետ Ռուսինյան, Գրիգոր Օտյան, Սերովբե Վիչենյան, Մկրտիչ Աղաթոն: Լիբերալ-բուրժուական հոսանքն ընդդեմ կղերականության եւ ազգային պահպանողականության:

Արեւմտահայերի սահմանադրական շարժումը եւ դրա արտացոլումը հասարակական հոսանքների պարբերականներում:

Հասարակական հոսանքների ու քաղաքական մտքի բախումները:

«Արեւելք» «Մեղու»(1856- 1874) եւ «Հյուսիսափայլ»(1858□ 1864) պարբերականների դերը դեմոկրատական ուղղության ձեւավորման գործում:

### Գրականություն

1. Ղուկասյան Վ., Պոլսահայ մամուլի եւ հրապարակախոսության սկզբնավորումը, Երեւան, 1975:
2. Ղազարյան Հ. Արեւմտահայերի սոցիալ-տնտեսական եւ քաղաքական կացությունը 1800-1870թթ., Երեւան,1967:
3. Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը եւ նրա ժամանակը, Երեւան,1955:
4. Մխիթարյան Մ., «Հյուսիսափայլ» ամսագիրը, Երեւան, 1958:
5. Հովհաննիսյան Ա., 19-րդ դարի 50-60-ական թթ. արեւելահայ հասարակական- քաղաքական հոսանքները, ՊԲՀ, 1965թ., N 4
6. Ղազարյան Հ., Ստեփան Ոսկանյան, Հայ նոր գրականության պատմություն, հ. 2, Երեւան,1962:
7. «Ստեփանոս Նազարյան», Երեւան, 1987:
8. Մակարյան Ա., Նալբանդյանը եւ արեւմտյան դեմոկրատիան, Երեւան, 1946:
9. Զրբաշյան Է., Մ. Նալբանդյանը եւ արդիականությունը, Երեւան, 1984:

## ԹԵՄԱ 3-4.
## Հայ հասարակական կյանքի զարգացման չափանիշները եւ պարբերական մամուլը 1860-ական թվականներին

Հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքի ընդհանուր վերելքը: Բուրժուական հարաբերությունների զարգացումը Հայաստանում: Հետռեֆորմյան հայ իրականությունը: Երկրի սոցիալ-տնտեսական կյանքը:

Ազգային պահպանողականների հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական հայացքները, տպագիր օրգանները («Կռունկ Հայոց աշխարհին»(1860-1863), «Արծվի վասպուրական» (1855-1856,1858-1864,1872-1874), «Արծվիկ Տարոնո»(1863-1865), «Ծիլն Ավարայրի»(1866-1867)):

Ազգային պահպանողականության եւ բուրժուական լիբերալիզմի հակադրությունն ու պայքարը: Ազգային-պահպանողական հոսանքի գաղափարախոսներ Մկրտիչ Խրիմյանը, Գարեգին Սրվանձտյանը, Կարապետ Եզյանը ազգության, կրոնի եւ դպրոցի մասին:

Պետրոս Սիմոնեանի ազգային պահպանողական ուղեգիծը («Մեղու Հայաստանի», 1863- 1886):

Գյուղացիա-դեմոկրատական եւ բուրժուա-ազգայնական միջանկյալ հոսանքների բնութագրական առանձնահատկությունները:

Արեւմտահայ ազգային-դեմոկրատական հոսանքը եւ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունը: Դեմոկրատական «Արեւմուտք»(1859-65), «Մեղու»(1856-1874), «Շաղիկ» (1861-1867), «Մյունոստի»(1858-1862) պարբերականների տեղն ու դերը ազգային շարժման քարոզչության մեջ:

Միքայել Նալբանդյանի հասարակական-քաղաքական գործունեությունը եւ ազդեցությունն արեւմտահայ հեղափոխական-դեմոկրատական ուղղության ձեւավորման վրա:

Կ. Պոլսի «Բարեգործական» ընկերության գործունեությունը:

Արեւմտահայերի Ազգային սահմանադրության (1860 եւ 1863) եւ Զեյթունի ապստամբության (1862) արձագանքները ժամանակի մամուլում, հասարակական հոսանքների գնահատականը եւ վերաբերմունքը: Արեւմտահայ դեմոկրատիայի հաղթանակը:

## Գրականություն


1. Ղազարյան Հ., Հարություն Ավաճյան, Երեւան, 1986:
2. Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը եւ նրա ժամանակը, h.1, Երեւան, 1955, h. 2, 1956
3. Ղազարյան Հ., Գրիգոր Չիլինկիրյան, Երեւան, 1959:
4. Ներսիսյան Մ., Հայ ժող. ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1890թթ., Երեւան, 2002:
5. Ղազարյան Հ., Արեւմտահայերի սոցիալ-տնտեսական եւ քաղաքական կացությունը 1800-1870թթ., Երեւան, 1967:
6. Մխիթարյան Մ., «Հյուսիսափայլ» ամսագիրը , Երեւան, 1958:
7. Պարսամյան Վ., Հայ ժող. պատմություն, h. 3, Երեւան, 1967:
8. Ջրբաշյան Է., Միքայել Նայբանդյանը եւ արդիականությունը, Երեւան, 1984:
9. Խառատյան Ա., Արեւմտահայ մամուլը եւ գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում, Երեւան, 1989:
10. Հարություն Սվաճյան, Հրապարակախոսություն, Երեւան, 1960:
11. Հակոբյան Մ., Զմյուռնահայ պարբերական մամուլը (1861-1880), Երեւան, 1984:
12. Ղազարյան Հ., Զեյթունի 1862թ. ապստամբության արձագանքները 19-րդ դարի հայ իրականության մեջ, Տեղեկագիր հասարակական գիտությունների, 1962, N10:

## ԹԵՄԱ 5.
## Ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունը

1870-ական թվականներ: Հասարակական զարգացման օրինաչափությունները: Հայ-ռուսական քաղաքական ու տնտեսական հարաբերությունները:

«Մշակը» հայ լիբերալիզմի խոսափող: Մշակականությունը քաղաքական-հասարակական հոսանք, էությունը, բնույթը, ազդեցությունը հասարակական կյանքի վրա:

Հասարակական-քաղաքական հոսանքների դիրքորոշումները 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ: Լիբերալ, պահպանողական եւ դեմոկրատական հոսանքների հակամարտությունը:

Հայկական հարցը եւ Սան Ստեֆանոյի 16-րդ, Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածները հայ հասարկական հոսանքների գնահատմամբ:

### Գրականություն


1. Պարսամյան Վ.,Հայ ժող. պատմություն, h.3, Երեւան, 1967:
2. Մխիթարյան, 19-րդ դարի երկրորդ կեսի արեւելահայ պարբերական մամուլի պատմությունից, Երեւան, 1976:
3. Խառատյան Ա. Արեւմտահայ մամուլը եւ գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում, Երեւան, 1989:
4. Գրիգոր Արծրունի, Երեւան, 1987:
5. Ղազարյան Հ., Մ. Մամուրյան, Երեւան,1961:
6. Հայ ժող. պատմություն, h. 6, Երեւան,1981:
7. Ռշտունի Վ., Հայ հասարակական հոսանքների պատմությունից, Երեւան, 1956, էջ 210-274
8. Ներսիսյան Մ., Հայ ժող. ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1890թթ., Երեւան, 2002:


## ԹԵՄԱ 6.
## Սերնդափոխությունը հայ հասարակական-քաղաքական հոսանքներում եւ պարբերական մամուլում

1880-ական թվականներ: Ցարական Ռուսաստանի քաղաքական ու տնտեսական գաղութացման քաղաքականությունը հայ հասարակական հոսանքների գնահատմամբ:

Ազգային պահպանողական «Փորձ» (1876-1881) եւ «Նոր Դար» (1884-1908) պարբերականների սոցիալ-տնտեսական եւ ազգային-քաղաքական ուղղությունները:

Հասարակական հոսանքները Արեւելյան Հայաստանում հայոց լեզվի ու հայ մշակույթի զարգացումն արգելակելու եւ արգելելու գործընթացի մասին:

Հայրենակցական, հայրենասիրական խմբակներն ու միությունների կազմավորումը Հայաստանի արեւելյան եւ արեւմտյան հատվածներում: Ազգային -ազատագրական պայքարի բնույթի հանդեպ հասարակական հոսանքների դիրքորոշումը: Ժամանակի պարբերական մամուլի տեղն ու դերը ազատագրական շարժման քարոզչության մեջ:

Նարոդնիկական մտածողության ձեւավորումը եւ հետագա ընթացքը: ժամանակի հայ բուրժուական հոսանքների հասարակական- տնտեսական եւ քաղաքական հայացքները եւ դրանց դասակարգային բովանդակությունը:

Պարբերական մամուլը ժամանակի մտայնությունների ու գաղափարական պայքարի արտահայտիչ: Հասարակական հոսանքների ազդեցությունը հայ մշակույթի, գրականության եւ հրապարակախոսության վրա:

## Գրականություն


1. Մխիթարյան, 19-րդ դարի երկրորդ կեսի արեւելահայ պարբերական մամուլի պատմությունից, Երեւան, 1976:
2. Ռշտունի Վ., Հայ հասարակական հոսանքների պատմությունից, Երեւան, 1956:
3. Հայ ժող. պատմություն, հ. 6, Երեւան,1981:
4. Կարինյան Ա., Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ.2, Երեւան, 1960:
5. Խառատյան Ա., Արեւմտահայ հասարակական մտքի եւ մամուլի հրապարակախոսության պատմությունից, Երեւան, 1980:


## Թեմա 7.
## Պարբերական մամուլը շաղկապող օղակ ազգահավաքման գործում

Արեւմտահայ հասարակական-քաղաքական մտքի ուղղությունները: Արեւմտահայ պարբերականները («Մասիս» (1852-1908), «Արեւելք» (1884-1912), «Հայրենիք» (1870-1909), «Մանզումեի էֆքյար» (1866-1919), «Արեւելյան մամուլ» (1871-1909)) ազգային, սոցիալական եւ քաղաքական հիմնահարցերի մասին:

Ազգային - պահպանողականները՝ որպես ազգային արժեքների, ազգի միասնության, առաջընթացի պաշտպաններ ու գաղափարախոսներ («Մեղու Հայաստանի»(1863-1886), «Փորձ»(1876-1881), «Պսակ»(1880-1884), «Նոր դար» (1884-1908)): Ազգային պահպանողականների, աջ եւ ձախ լիբերալների ու ժողովրդավարների գաղափարական հակադրությունն ու պայքարը:

Հայ ժողովրդի տնտեսական զարգացման, ազգային երկրագործության, ազգային վաճառականության ստեղծման, եվրոպական կապիտալի դեմ պայքարելու, աշխատավորության սոցիալական ազատագրության եւ այլ հարցերի արծարծումը արեւելահայ եւ արեւմտահայ հասարակական հոսանքների պարբերականներում:

Արեւելահայ լիբերալ-բուրժուական գաղափարաբանության ձախ թեւը («Մուրճ»,1889-1907): Հայրենիքի ապագայի, մասնավորապես արեւմտահայության փրկության ուղիների արտացոլումը հայ հասարակական հոսանքների պարբերական մամուլում, հասարակական մտքի քննարկումներում:

## Գրականություն


1. Մխիթարյան, 19-րդ դարի երկրորդ կեսի արեւելահայ պարբերական մամուլի պատմությունից, Երեւան, 1976:
2. Խառատյան Ա., Արեւմտահայ մամուլը եւ գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում, Երեւան, 1989:

3. Պարսամյան Վ, Հայ ժող. պատմություն, հ. 3, Երեւան, 1967:
4. Հայ նոր գրակ. պատմություն, Երեւան, 1972:
5. Հայ ժող. պատմություն, հ.6, Երեւան, 1981:
6. Ռշտունի Վ., Հայ հասարակական հոսանքների պատմությունից, Եր., 1956:

## ԹԵՄԱ 8.
## Հասարակական - քաղաքական հոսանքների նոր խնդիրները (19-րդ դարավերջ)

19-րդ դարավերջի հայ իրականությունը:

Հասարակական հոսանքների նոր խնդիրները կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը զուգահեռ, նրանց գաղափարական ներհակությունները, զարգացման հիմնական միտումները: Քաղաքական կուսակցությունների ստեղծումը: Մամուլը եւ հրապարակախոսությունը քաղաքական պայքարի հզոր զենք:

Դարավերջի հայ հասարակական-քաղաքական հոսանքների պարբերական մամուլը («Արձագանք»(1892-1898),«Մշակ» (1872-1920), «Նոր Դար» (1884-1908), «Արեւելյան մամուլ» (1871- 1909), «Հայրենիք»(1870-1909),«Մասիս»(1852-1908), «Մուրճ» (1889- 1907) եւ այլն):

Հայկական ջարդերի, արեւմտահայ ազատագրական շարժումների արձագանքը պարբերական մամուլում:

Հայրենիքից զրկված հայ ժողովրդի սոցիալական եւ ազգային-ազատագրության, գոյատեւման եւ միավորման ձգտման արտացոլումները հայ հասարակական հոսանքների մամուլում: 19-րդ դարի վերջի հայ մամուլի հասարակական դերը եւ իրավական դրությունը:

### Գրականություն.

1. Ներսիսյան Մ., Հայ ժող. ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1890թթ., Երեւան, 2002:
2. Պարսամյան Վ., Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երեւան, 1958:
3. Հայ ժող. պատմություն, h 6, Երեւան, 1981:
4. Մ.Մխիթարյան, 19-րդ դարի երկրորդ կեսի արեւելահայ պարբերական մամուլի պատմությունից, Երեւան,1976:
5. Խառատյան Ա., Արեւմտահայ մամուլը եւ գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում, Երեւան, 1989:
6. Ռշտունի Վ., Հայ հասարակական հոսանքների պատմությունից, Երեւան, 1956:
7. Հովհաննիսյան Ա., Արեւելահայ լիբերալիզմի եւ նարոդնիկության ներհակությունները իննսունական թվականների սկզբներին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1962, N2:
8. Վարդանյան Հ., Արեւմտահայերի ազատագրության հարցը եւ հայ հասարակական հոսանքները XIX դարի վերջին քառորդում, Երեւան, 1967:

# ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԶԼՄ-ՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ XX ԴԱՐ

*Պատրաստվել է Երեւանի մամուլի ակումբում*

Սույն ծրագրի նպատակը ուսանողներին արտասահմանյան զանգվածային լրատվության միջոցների 20-րդ դարի պատմության եւ ժամանակակից իրավիճակի, դրանց զարգացման օրինաչափությունների, աշխարհի առաջատար երկրների լրագրության առանձնահատկությունների մասին գիտելիքներ հաղորդելն է:

Դասընթացն ավարտելուց հետո ուսանողները պետք է գիտելիքներ ունենան հետեւյալ թեմաների մասին.

1. Մամուլի պատմությունն ու զարգացման առանձնահատկություններն աշխարհի տարբեր երկրներում եւ տարածաշրջաններում,
2. Էլեկտրոնային ԶԼՄ-ների զարգացումն արտասահմանում,
3. Ցանցային լրատվամիջոցների զարգացումն ու ժամանակակից ԶԼՄ-ների տեսակները,
4. Համաշխարհային լրատվական շուկան XX եւ XXI դարերի սահմանագծին,
5. ԶԼՄ-ների գլոբալացման եւ տեղայնացման գործընթացները,
6. ԶԼՄ-ների մասին օրենսդրութունն ու ինքնակարգավորման մեխանիզմներն արտասահմանում,
7. Միջազգային կազմակերպություններն ու խոսքի ազատության սկզբունքները:

## Մամուլի պատմությունն ու զարգացման առանձնահատկություններն աշխարհի տարբեր երկրներում եւ տարածաշրջաններում

**ա)** Արդյունաբերական հեղափոխության ազդեցությունը մամուլի զանգվածային լսարանի ձեւավորման վրա: ԱՄՆ-ի ԶԼՄ-ները XIX դարավերջին եւ XX դարի սկզբին: Ամերիկյան մամուլը՝ նորարարության «օրենսդիր»: Գովազդային բիզնեսի եւ ԶԼՄ-ներում ներդրումների աճը: ԶԼՄ-ների վերաճումը խոշոր արտադրական ձեռնարկությունների: Լրագրության՝ իբրեւ առանձին լիիրավ մասնագիտության կայացումը, լրագրության դպրոցների ձեւավորումը: Գունավոր տպագրության եւ պատկերազարդ հրատարակությունների զարգացումը: Կոմիքսների տարածումը մամուլում: Ամերիկյան մեդիամագնատները (Պուլիտցեր, Հերստ եւ այլք): Մամուլի ժանրային բազմազանությունը, ռեպորտաժի, հարցազրույցի, լրագրողական հետաքննության ժանրերի զարգացումը: ԱՄՆ առաջատար հրատարակությունները. «New York Times», «Time», «Wall Street Journal», «Washigton Post», «Newsweek»: Ամերիկյան լրագրության մեջ «մաքրեյքերների» («կեղտ պտռողների») շարժումը: Մամուլի ակումբների՝ իբրեւ պրոֆեսիոնալ լրագրողների համախմբման ձեւի ստեղծու-

մը: «Life» եւ «Look» հանդեսների առանձնահատկություններն ու դրանց կրախը: Դայջեստ հանդեսների տարածումը: «National Geographic» հանդեսի եւ նրա հետեւորդների՝ իբրեւ գիտահանրամատչելի պարբերականների նոր տեսակի ֆենոմենը: Թեդ Թերները եւ հեռարձակման բնագավառում նրա նախագծերը (CNN եւ այլն): ԶԼՄ-ներն ու քաղաքական սկանդալները ԱՄՆ-ում («Ուոթերգեյթ», «Իրանգեյթ» եւ այլն): Ամերիկյան նշանավոր լրագրողները (Ուոլթեր Կրոնկայթ, Լարի Քինգ եւ ուրիշներ). ԱՄՆ լրատվամիջոցները եւ պատերազմները Բալկաններում ու Իրաքում:

**բ)** Բրիտանական ԶԼՄ-ները XIX դարավերջին եւ XX դարի սկզբին: Զանգվածային լրատվամիջոցների բուռն զարգացման սոցիալ-տնտեսական եւ տեխնոլոգիական նախադրյալները: Զանգվածային տեղեկատվության բնագավառի վերածումը խոշոր բիզնեսի: Պոլիգրաֆիայի առաջընթացը: Բրիտանական մեդիամագնատներն ու նրանց հրատարակությունները. լորդ Նորդքլիֆ (Հարմսուորթ), Մաքսվել, Թոմսոն եւ այլք: Մամուլի մոնոպոլացումը: Ռադիոյի եւ հեռուստատեսության հայտնագործումը եւ հեռարձակող ԶԼՄ-ների տարածումը: BBC-ին իբրեւ հանրային հեռարձակման գաղափարի իրականացում: Ռուպերտ Մերդոկի «կայսրությունն» ու նրա ազդեցությունը Միացյալ Թագավորության հասարակական քաղաքական կյանքի վրա: XX դարում պարբերականների տիպոլոգիական հեղափոխությունը: Շուկայի բաժանումը էլիտար, որակյալ եւ «թաբլոիդային» հրատարակությունների միջեւ («Ֆայնենշլ Թայմս» «Թայմս», «Սանդի Թայմս» եւ այլն): Մասնավոր հեռարձակման առանձնահատկությունները Մեծ Բրիտանիայում:

**գ)** Գերմանական ԶԼՄ-ները: Գաղափարախոսական ազդեցությունները գերմանական մամուլի վրա, կուսակցական մամուլի գերակշռությունը Վայմարյան հանրապետությունում: ԶԼՄ-ների պրոպագանդիստական բնույթը նացիստական կառավարման տարիներին: Գերմանական ռադիոն Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Մամուլի ազատականացումը հետպատերազմյան ժամանակաշրջանում: Աքսել Շփրինգերի կոնցեռնը, «Der Spiegel» հանդեսը: ԳՖՀ-ի եւ ԳԴՀ-ի ԶԼՄ-ների գաղափարախոսական հակամարտությունը: Գերմանական «դեղին» մամուլը («Bild»): Գյունտեր Վալրաֆն իբրեւ հետաքննական լրագրության ներկայացուցիչ: Հանրային հեռարձակումը Գերմանիայում: Կուսակցական մամուլի վախճանը: Գերմանիայի Արեւելյան եւ Արեւմտյան հատվածների միավորումը եւ ԶԼՄ-ների միասնական շուկայի ձեւավորումը:

**դ)** Ֆրանսիական ԶԼՄ-ները XIX դարավերջին եւ XX դարի սկզբին: Հրատարակությունների սրընթաց աճը XIX – XX դարերի սահմանգծին: Լուսանկարչության տարածումը: Ֆրանսիական հրատարակությունների՝ ամերիկյան օրինակին հետեւելը («Paris Match», «L’ Express», «Le Nouvel Observateur»). Մամուլի դերը Ֆրանսիայի հետպատերազմյան վերականգնման տարիներին: Գաղափարախոսական դոկտրինաները 50-60 - ական թվականների ֆրանսիական մամուլում: ԶԼՄ-ների, մասնավորապես՝ հեռարձակման բնագավառի օրենսդրական կարգավորման եւ ինքնակարգավորման ֆրանսիական մոդելը: «Ֆրանս պրես» գործակալությունը՝ իբրեւ աշխարհի խոշորագույն լրատվական գործակալություններից մեկը: «Մոնդ» թերթի ստեղծման առանձնահատկությունները:

**ե)** Մյուս եվրոպական երկրների ԶԼՄ-ները XIX դարավերջին եւ XX դարի սկզբին: Իտալիայի, Իսպանիայի, Հունաստանի մամուլում գաղափարական կողմնորոշմամբ մամուլի գերակշռությունը, դրա քաղաքական նախադրյալները: Հակառակ իրավիճակը Հյուսիսային Եվրոպայի երկրներում (Նիդերլանդներ, Շվեդիա եւ այլն): Ազգային լեզվի, մշակույթի պահպանման եւ էթնիկական բազմակարծության ապահովմանն ուղղված կարգավորումը (Իռլանդիա, Բելգիա եւ այլն): Պետության աջակցությունը բազմակուսակցական մամուլին 60-70-ական թթ. եւ դրա պատճառները (Ավստրիա, Ֆինլանդիա): Հանրային ԶԼՄ-ների կարգավորման առանձնահատկություններն այլ երկրներում: Եվրոպական միության ընդլայնումը, եւ լրատվամիջոցների շուկայի ձեւափոխությունները նախկին սոցիալիստական ճամբարի երկրներում: XX դարում եվրոպայում ԶԼՄ-ների առավել տարածում գտած տեսակները. քրիստոնեակղերական, քրիստոնեադեմոկրատական, լիբերալ, սոցիալ-դեմոկրատական, կոմունիստական, աջ-ազգայնական, ֆաշիստական եւ նեոնացիստական, «էկոլոգիական» («կանաչների»): Եվրոպական ինտեգրացիան եւ համաեվրոպական ԶԼՄ-ների զարգացումը («Internacionale Herald Tribune», «Euronews»):

## Այլ երկրների եւ տարածաշրջանների ժամանակակից ԶԼՄ-ները

**ա)** Ռուսաստանի, ԽՍՀՄ-ի եւ սոցիալիստական ճամբարի երկրների ԶԼՄ-ները XIX դարավերջին եւ XX դարի սկզբին: Ռուսաստանի սոցիալ-քաղաքական եւ տնտեսական զարգացման առանձնահատկությունները XIX-XX դարերի սահմանգծին եւ դրա ազդեցությունը մամուլի իրավիճակի վրա: Պաշտոնական եւ կառավարամետ (կառավարական, տարածքային, նահանգային, գերատեսչական) մամուլը: Մինչհեղափոխական ռուսական մամուլի կենտրոնացումը Մոսկվայում եւ Սանկտ Պետերբուրգում: Ցարական գրաքննությունը: Երեկոյան հրատարակությունները XX դարի սկզբին: Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը եւ նրա մամուլը: XX դարասկզբի զանազան քաղաքական հոսանքների (կադետական, սեւհարյուրակային) մամուլը: Մամուլը Առաջին համաշխարհային պատերազմի, հեղափոխության եւ քաղաքացիական պատերազմի տարիներին: Մամուլում այլակարծության դեմ բոլշեւիկյան տեռորը: Մամուլի դերի մասին Վլադիմիր Լենինի աշխատությունները: Մամուլի խորհրդային համակարգի ձեւավորումը (կուսակցական, կոմերիտական, սովետների եւ այլն): Ստալինյան բռնությունները եւ մամուլը: Գրաքննությունը ԽՍՀՄ-ում («գլավլիտ»): Խորհրդային ԶԼՄ-ները Հայրենական պատերազմի ժամանակ: Ռադիոյի դերը ԽՍՀՄ-ում: Ռուսական էմիգրանտական մամուլը: Արտասահմանում քարոզչություն իրականացնելու համար ստեղծված ԶԼՄ-ներ (ինչպես արեւմտյան երկրներում, այնպես էլ ԽՍՀՄ-ում): 50-60-ական թվականների «հալոցքը» եւ դրա արտացոլումը մամուլում: Սոցիալիստական ճամբարի արեւելաեվրոպական երկրների ԶԼՄ-ների համակարգը. ընդհանրություններ եւ տարբերություններ: Ձեւականորեն բազմակուսակցական մամուլ Լեհաստանում, ԳԴՀ-ում, Չեխոսլովակիայում ու Բուլղարիայում եւ միակուսակցական մամուլ մյուս սոցիալիստական երկրներում: Խորհրդային «հաստափոր» հանդեսներն իբրեւ «այլընտրանքային» «հոգեւոր սննդի» աղբյուր: Լճացման տարիների «ինքնահրատը» («սամիզդատ», 70-ականներից 80-ականների սկիզբ): Գիտահանրամատչելի պարբերականները ԽՍՀՄ-ում: ԽՍՀՄ-ում եւ սոցիալիստական երկրներում հեռուստատեսության զարգացումն ու դերը: Վերակառուցման ժամանակաշրջանի խորհրդային մամուլը: Տարբեր ժամանակաշրջանների խորհրդային առաջատար լրատվամիջոցնե-

րը, դրանց տիպաբանությունը. «Պրավդա», «Իզվեստիա», «Կոմսոմոլսկայա պրավդա», «Տրուդ», «Լիտերատուրնայա գազետա», «Արգումենտի ի ֆակտի», «Օգոնյոկ», «Մոսկովսկիե նովոստի», «Մայակ» ռադիոկայան, «ՏԱՍՍ» գործակալություն, Նորությունների մամուլի գործակալություն եւ այլն: Ռուսական անկախ ԶԼՄ-ների վերածնունդն ու զարգացումը ԽՍՀՄ փլուզումից առաջ եւ հետո: Ռուսական լրատվական շուկայի հին ու նոր առաջատարները («Մոսկովսկի կոմսոմոլեց», «Նեզավիսիմայա գազետա», ՌՏՌ, ՆՏՎ եւ այլն): «Օլիգարխներն» ու ռուսական ԶԼՄ-ները: ԶԼՄ-ների դերը քաղաքական ճգնաժամերի եւ ընտրությունների ընթցքում. 1991, 1993, 1996, 2000: Հակասական գործընթացներ հետխորհրդային մամուլում, նախկին խորհրդային հանրապետություններում խոսքի ազատության մակարդակները:

**բ)** Ասիայի, Աֆրիկայի եւ Լատինական Ամերիկայի ԶԼՄ-ները XIX դարավերջից մինչեւ XXI դարի սկիզբը: Զարգացող երկրների ԶԼՄ-ների տեխնոլոգիական եւ տնտեսական դժվարությունները: Գաղութատիրական վարչակարգերի ազդեցությունը ԶԼՄ-ների վրա: Կոմունիստական մամուլի չինական մոդելը, ժամանակակից Չինաստանում հասարակական-քաղաքական կացութաձեւերի միախառնումը եւ դրա ազդեցությունը ԶԼՄ-ների վրա: Արաբական մամուլ. կոմերցիալացում եւ պետական ճնշումներ: Ժողովրդավարական եւ ավտորիտար միտումները Աֆրիկայի տարբեր երկրներում: Ժողովրդավարության առանձնահատկությունները Հնդկաստանում եւ հնդկական մամուլը: ԶԼՄ-ների զարգացման փուլերը եւ առանձնահատկությունները Ճապոնիայում: Լատինաամերիկյան երկրների մամուլը. ժողովրդավարական եւ ավտորիտար դրսեւորումները, հյուսիսամերիկյան, արեւմտաեվրոպական եւ սովետական ազդեցությունների պայքարը եւ տեղական առանձնահատկությունները: Կուբայի մամուլը գաղութատիրության, ապազաղութացման եւ սոցիալիստական ժամանակաշրջաններում: Ասիայի, Աֆրիկայի եւ Լատինական Ամերիկայի երկրներում պետական, հանրային եւ մասնավոր հեռուստառադիոհեռարձակման մոդելների զարգացումը: Տեղեկատվական ոլորտում Արեւմուտքի մենաշնորհին դիմակայելու զարգացող երկրների փորձերը: Տեղեկատվական ոլորտում տարածաշրջանային համագործակցության տարբեր ձեւերն ու միջազգային նախագծերը (Arabsat, Afrosat, PanAmSat եւ այլն): Կատարյան «El Jazeera» հեռուստաընկերության ֆենոմենը:

## Զանգվածային լրատվության միջոցների ոլորտի միջազգային իրավական փաստաթղթերը

**ա)** «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր» (Հոդված 19). «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիա» (Հոդված 10): Եվրոպայի խորհրդի՝ տեղեկատվության ոլորտի կարգավորմանը վերաբերող հանձնարարականները: Խաղաղության ամրապնդման, ժողովուրդների միջեւ փոխըմբռնման, մարդու իրավունքների պաշտպանության, ռասիզմը, ապարտեիդը, պատերազմի սադրանքներն արմատախիլ անելու գործում ԶԼՄ-ների ավանդի վերաբերյալ ՅՈՒՆԵՍԿՕ - ի հռչակագիրը: Տեղեկությունների տարածումն ու հաղորդակցական ռեսուրսներն օգտագործելը կարգավորող այլ փաստաթղթեր: Հեղինակային իրավունքի, ռադիոհաճախականությունների, անդրսահմանային հեռարձակման միջազգային կարգավորումը: Փաստաթղթերի հռչակագրային եւ իրավական բնույթը:

**բ)** Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը եւ տեղեկատվական վեճերի քննության պրակտիկան: ԵԽ անդամ երկրների քաղաքացիների բողոքների քննարկման տեխնոլոգիան: Զանգվածային լրատվության միջոցների գործունեությանն առնչվող վեճերի քննության առավել բնորոշ նախադեպերը:

**գ)** ԶԼՄ-ների օրենսդրության կառուցվածքը եւ դրա առանձնահատկությունները տարբեր երկրներում եւ տարածաշրջաններում (ամերիկյան, բրիտանական, մայրցամաքային-եվրոպական, ռուսական եւ այլ մոդելներ): ԶԼՄ-ների օրենսդրության հիմնական բաղկացուցիչները. սահմանադրական դրույթներ, անվանարկմանը վերաբերող օրենքներ, ընտրությունների մասին օրենսդրության համապատասխան բաժինները, ԶԼՄ-ների մասին ընդհանուր օրենքներ, հեռարձակման մասին օրենսդրություն, գովազդի մասին օրենսդրություն, տեղեկատվության մատչելիության մասին օրենսդրություն, պետական եւ հատուկ գաղտնիքների մասին օրենսդրությունը՝ ԶԼՄ-ներին վերաբերող մասով, հեղինակային իրավունքի մասին օրենսդրություն, ցանցային ԶԼՄ-ների (Ինտերնետ) կարգավորում:

## Մամուլի էկոնոմիկա եւ մասնագիտական էթիկա

**ա)** ԶԼՄ-ներն իբրեւ ապրանք: Տեղեկատվական շուկայի առանձնահատկությունները եւ նրա ենթարկումը ընդհանուր շուկայական սկզբունքներին:

**բ)** ԶԼՄ-ների եկամուտների աղբյուրները (տպաքանակի իրացում/բաժանորդավճար, գովազդ, դոտացիաներ, բարեգործություն/հովանավորչություն): Դրանց փոխադարձ կապը էթիկական սկզբունքների հետ: Իրավական, շուկայական եւ էթիկական կարգավորման զուգակցումը եւ դրանց կիրառումը ԶԼՄ-ների տարբեր խմբերի նկատմամբ:

**գ)** Մասնագիտական էթիկայի կանոնագիրը եւ դրա պահպանումն իբրեւ շուկայական գործոն: Տեղեկատվական շուկայի կառուցվածքը, եւ սպառողների կողմնորոշումը՝ կախված այս կամ այն ԶԼՄ-ների կողմից էթիկական նորմերի նկատմամբ վերաբերմունքից:

**դ)** Այլ տնտեսական գործոնների (ԶԼՄ-ների մենաշնորհ, համակենտրոնացում, տեղեկատվական տարածքի գլոբալացում եւ այլն) ազդեցությունը մամուլի էթիկական կեցվածքի վրա:

## Լրագրողական մասնագիտական էթիկայի կանոնագրերի առաջացումն ու զարգացումը

**ա)** Էթիկական կանոնագրերի ձեւավորման պատմական նախադրյալները: Լրատվամիջոցների «Վայրի շուկան» XIX դարի կեսերին: Առեւտրականացված մամուլի գործունեության քննադատությունը (Մարկ Տվեն, Խոսե Մարտի, Էփտոն Սինկլեր, Ուիլ Իրվինգ, Լինքոլն Սթեֆենս եւ այլք) ԱՄՆ-ում եւ եվրոպական երկրներում: «Մաքրեյքերների» («կեղտ պտռողների») շարժումը: «Դեղին» մամուլի հասարակական քննադատությունը: Ժուռնալիստիկայի կայացումն իբրեւ մասնագիտություն՝ XIX դարի վերջից - XX դարի սկզբին: Լրագրողների առաջին մասնագիտական միավորումների մասնագիտական էթիկա-

յի կանոնագրերի առաջացումը («Ֆրանսիական լրագրողների մասնագիտական պարտավորությունների կանոնագիր», Խմբագիրների ամերիկյան ընկերակցության «Լրագրության կանոնները»): Տարբեր տեսակի կանոնագրերի առաջացման պատմական հաջորդականությունը. ազգային (տարածաշրջանային, ընդհանուր) - գործառնական - հատուկ (խմբակային) - ճյուղային (տեխնոլոգիական) - խմբագրական:

**բ)** էթիկական կարգավորման կարեւորությունը՝ հաշվի առնելով տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն ու Ինտերնետի, արբանյակային հեռարձակման եւ այլնի իրավական կարգավորման հնարավորությունների սահմանափակությունը: Ինտերնետում տեղեկատվական հոսքերի կարգավորման մեխանիզմները. մատակարարների ինքնակարգավորում եւ այլն:

**գ)** Լրագրության եւ զանգվածային լրատվության բնագավառի հիմնական միջազգային եւ տարածաշրջանային կազմակերպությունները ու նրանց գործունեությունը: Լրագրողների միջազգային դաշնություն, Մամուլի միջազգային ինստիտուտ, Թերթերի համաշխարհային ընկերակցություն, «Արտիկլ 19», Լրագրողների պաշտպանության կոմիտե, «Ֆրիդոմ ֆորում», Լրագրության միջազգային կենտրոն, ԶԼՄ-ների եվրոպական ինստիտուտ, Լրագրության եվրոպական կենտրոն, Լրագրողական միությունների միջազգային համադաշնություն, Լրագրողների «Հարավային Կովկաս» միջազգային ընկերակցություն եւ այլն:

## Երաշխավորվող գրականություն

### Հայերեն հրատարակություններ

1. Ժուռնալիստիկա (տեսության եւ պատմության հարցեր), ԵՊՀ ԺՖ, պրակ Ա - Դ, Եր. 1999 - 2003
2. Վերներ Մայեր, Լրագրային գործ, հտ. 1-2, ԵՄԱ, Եր. 2001
3. Եվրոպայի ուղին դեպի տեղեկատվական հասարակություն, ԵՄԱ, Եր. 2000
4. Զանգվածային տեղեկատվության բնագավառը ԵԽ փաստաթղթերում, ԵՄԱ, Եր. 2003

### Ռուսերեն հրատարակություններ

1. Авраамов Д. Профессиональная этика журналиста-М.,1998
2. Бухарцев В. Вопросы профессиональной этики.-Свердловск,1971
3. Брэдли, Б. Этические нормы газеты "Вашингтон Пост". // "Среда", 1995. N4. C. 60-62.
4. Воскобойников Я.С., Юрьев В.К. Журналист и информация.
5. Профессиональный опыт западной прессы. Агентство "Новости". М., 1993.
6. Вороненкова Г. Ф. Путь длиною в пять столетий: от рукописного листка к информационному обществу. Национальное своеобразие средств массовой информации Германии. М., 1999.

7. Всеобщая Декларация прав человека, принятая Генеральной Ассамблеей ООН 10 декабря 1948 г. // Международное право в документах. М., 1997.
8. Гамсун К. Бездуховная Америка. // Слово, 1993, №1-2, С. 82.
9. Дэннис, Эверетт и Меррилл, Джон. Беседы о масс-медиа. РАИПЦ - "Вагриус". М., 1997.
10. Есин Б. И. Русская дореволюционная газета. М., 1971.
11. Жирков Г. В. Журналистика двух Россий: 1917-1920 гг. СПб, 1999.
12. Короченский А. П. Этическое регулирование журналистской деятельности (зарубежный опыт). Ростов-на-Дону, 1999.
13. Культура социально-политического диалога.-М.,1991
14. Кумылганова И. Правовые критерии в профессиональной журналистской деятельности. (дисс.)-М.1992
15. Законодательство и практика средств массовой информации в странах СНГ и Балтии. М., 1999.
16. Корнилов Е.А. Журналистика на рубеже тысячелетий. Ростов-на-Дону. 1999.
17. Лабрюйер Ж. Характеры, или Нравы нынешнего века. М., Л., 1964.
18. Лучинский Ю. В. Журналистика и проблемы формирования национальной социокультурной модели в Америке. Краснодар, 1997.
19. Лучинский Ю. В. Очерки истории зарубежной журналистики. Краснодар, 1996.
20. Майн, Херманн. Средства массовой информации в Федеративной Республике Германии. "Коллоквиум". 1995.
21. Махонина С. Я. Русская дореволюционная печать. 1905-1914 гг. М., 1991.
22. Овсепян Р. П. История новейшей отечественной журналистики. М., 1996.
23. Политика газеты "Нью-Йорк Таймс" по предотвращению конфликта интересов. // "Среда", 1995. N4. С. 57-59.
24. Рэддик, Рэнди и Кинг, Эллиот. Журналистика в стиле он-лайн. НИП- "Вагриус". М., 1999.
25. Сбруев В. В. Возникновение и развитие прогрессивной печати в Южной Америке (Аргентина, Уругвай, Чили). М., 1989.
26. Сбруев В. В. Из истории демократического движения журналистов Латинской Америки. // Актуальные проблемы журналистики Азии, Африки и Латинской Америки. М., 1989. С. 119-132.
27. Сиберт, Фред С., Шрамм, Уилбур, Питерсон, Теодор. Четыре теории прессы. НИП- "Вагриус". 1998.
28. Справочник для журналистов Центральной и Восточной Европы. Всемирный 18. Комитет свободы прессы. Издательство "ППП". М., 1993.
29. Тревельян Дж. М. Социальная история Англии. М., 1959. С. 425 -426.
30. Уперов В. В. Реклама - ее сущность, значение, историческое развитие и психологические основы. Гермес. Торговля и реклама. Сборник. СПб., 1994.
31. Шиллер, Герберт. Манипуляторы сознанием. "Мысль" М., 1980.
32. Шостром Э. Анти-Карнеги или человек-манипулятор.-М.,1992.

## Այլ լեզուներով հրատարակություններ


1. A Brief Profile of the American Press. U.S. Journalism and the Print Media. Reston. VA. 1992.
2. Aspects of Britain. Broadcasting. *HMSO. London.* 1993.
3. BBC. Producers' Guidelines. *BBC. London.* 1996
4. *Burrows, William E.* On Reporting the News. NYU Press. NY. 1977. Busby, Linda J. Mass Cummunication in a New Age.-Scott, Foresman and com.,1993
5. Christians N., Clifford J., others. Media Ethics-Longman,1992
6. *Clifford G. Christians, Kim B. Rotzoll, Mark Fakler.* Media Ethics. *Longman Ink. NY. 1987.*
7. *Connors, Tracy Daniel.* Longman Diccionary of Mass Media & Communication. *Longman Ink.* NY. 1982.
8. Day, Louis A. Ethics in Media Cummunications Cases and Controversies-Wadsworth Publishing com., 1994
9. Deming, Caren J., others. Media in Society-Scott, Foresman and com., 1996
10. *Emery, Michael and Emery, Edwin.* The Press and America. An Interpretive History of the Mass Media. *Prentice Hall. New Jersey.* 1995.
11. Ferguson, Donald, others. Journalism Today,-National Textbook com., 1996
12. *Fonseca Alvarez, Saul.* Periodismo noticioso y sus secretos. Bogota. 1994.
13. *Friedlander, Edward Jay and Lee, John.* Feature for Newspapers and Magazines. The Pursuit of Excellence. *Haprer Collins College Publishers*. NY. 1993.
14. *Garrison, Bruce and Sabljak, Mark.* Sport Reporting. *Iowa State University Press. Ames, Iowa,* 1985.
15. Glimpses on the Federation of Arab Journalists.-FAJ. *Damascus.* 1985.
16. *Graber, Doris* A. Mass Media and American Politics. *CQ Press. Washington*. 1989.
17. *Lambert, Edmund B.* Committed Journalism: An Ethic for the Profession. *Indiana Univ. Press. Blumington.* 1986.
18. *Mencher, Melvin.* Basic Media Writing. Brown & Benchmark. *Dubugue, IA*. 1996.
19. *Merrill, John Calhoun.* Global Journalism. A Survey of the World's Mass Media. Longman. NY. 1983.
20. Morgan E. S. The American Revolution Considered as an Intellectual Movement / Paths of American Thought. Ed. By A. M. Schlesinger, jr. and M. White. Boston, 1963.
21. New Informational and Communication Order. *Sourcebook*.- IOJ. *Prague*. 1986.
22. *Nordenstreng, Kaarle and Hifzi Topuz (Eds.).* Journalist: Status, Rights and Responsabilities.-IOJ. Prague. 1989.
23. *Paneth, Donald.* The Encyclopedia of American Journalism. *Facts on File Publications.* NY. 1983.
24. Ferguson, Donald, others. Journalism Today,-National Textbook com.,1993

25. *Pathasarathy, Rangaswami.*Journalism in India. From the Earliest Times to the Present Day. *Sterling Publ. New Delhi*. 1989.
26. *Pathasarathy, Rangaswami.* Here is the News! Reporthing for the Media. *Sterling Publ. New Delhi.* 1994.
27. Proposal for the Reform of Libel Law. The Reform of the Libel Reform Project of the Annenberg Washington Program. *The Annenberg Washington Program in Communication Policy Studies.*
28. *Nortwestern University. Washington,* DC. 1988.
29. *Sanford, Bruce* W. Sanford's Synopsys of Law & Privacy. World *Almanach Books*. NJ. 1991.
30. *Schudson, Michael*. The Power of News. *Harvard University Press. Cabridge, Mass.* 1995.
31. *Shook, Frederic.* Television Field Production and Reporting. *Longman.* NY-London. 1989.
32. *Solomon, Joel* A. Failing The Democratic Challenge. Freedom of Expression in Multi-Party Kenya-1993. *The Robert F. Keenedy Center for Human Rights. Washington*. 1994.
33. *Stephens, Mitchell.* Broadcast News. *Harcourt Brace Jovanovich College Publishers. Orlando, Fla*. 1993.
34. *Stephens M. A History of News: From the Drum to the Satellite. NY, 1989.*
35. *Stephens, Mitchell and Lanson, Gerard*. Writing & Reporting the News. *Holt, Rinehart and Winston, Ink.* 1994.
36. The Associated Press Stylebook and Libel Manual. *Addison-Welsey Publishing* Co. NY. 1994.
37. *Vivian, John*. The Media of Mass Communication. *Simon & Schuster. Needham  Heights, Mass.* 1995.

## Պարբերականներ

"Демократический журналист".
"Журналист".
"Профессия-журналист".
"Среда".
"INDEX for Censorship"/ "Досье на цензуру".
"Columbia Journalism Review".
"Editor and Publisher".
"Newsletters of IOJ". Prague.
"The Arab Journalist". FAJ.

## Ինտերնետային կայքեր

Международная Федерация журналистов - http://www.ifj.org
Федеральная комиссия по коммуникациям (США) - http://www.fcc.org

# ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

*Հեղինակ՝* ***Ռոզա ԵՂԻԱԶԱՐՅԱՆ***

Ծրագրի նպատակն է ներկայացնել լրատվական միջոցների հոգեբանական ազդեցության հետեւանքները, բացահայտել հանրային գիտակցության վրա ազդեցություն գործելու հնարքները, ցուցադրել անձնական անվտանգությունը ապահովելու հնարավորությունները: Ներառված են նաեւ լրագրողի անհատականության, արտաքին տեսքի, մարդկանց համոզելու, սթրեսներին դիմադրելու եւ հոգեբանական այլ խնդիրների հետ կապված հարցեր:

Դասընթացը հիմնված է արտասահմանյան հայտնի լրագրողների, հոգեբանների, ԶԼՄ-ների հոգեբանության մասնագետների, ինչպես նաեւ՝ հեղինակի երկարատեւ լրագրողական փորձի եւ գիտական ուսումնասիրություններից քաղած նյութերի վրա:

Դասընթացի յուրացումը ենթադրում է հետեւյալ թեմաների իմացություն.

1. ԶԼՄ-ների հոգեբանական ազդեցությունը եւ արժեքային դիրքորոշումների հաստատումը,
2. Արտաքին տեսքի հոգեբանական ազդեցությունը,
3. Լրատվության աղբյուրներ,
4. Անձնականի եւ մասնագիտականի անջրպետը,
5. Լռությունն իբրեւ հոգեբանական հնարք հարցազրույցի ընթացքում,
6. Ուշադրության ճգնաժամ,
7. Լուրեր: Առաջնահերթ նորություն,
8. Անձնական կյանքի լուսաբանում,
9. Սթրես: Սթրեսի հետեւանքները,
10. Լրատվական ահաբեկչություն,
11. Հումորը եւ խաղը իբրեւ լիցքաթափվելու միջոցներ,
12. Որո՞նք են հասկանալի լինելու պայմանները,
13. Ատրակցիայի (համակրանքի) ձեւավորում,
14. Կինետիկ նշաններ (ժեստ, շարժում),
15. Ինչպես ներազդել հեռուստադիտողի վրա:

## 1. ԶԼՄ-ների հոգեբանական ազդեցությունը եւ արժեքային դիրքորոշումների հաստատումը

Հանգստի ո՞ր ձեւն է առավել տարածված աշխարհում: Էլեկտրոնային եւ տպագիր ԶԼՄ-ների ազդեցությունների տարբերությունները: Հեռուստատեսությանը եւ թերթերին տրամադրվող ժամանակի քանակը: Ի՞նչ է արժեքային դիրքորոշումը: Արժեքների փոփոխությունը ԶԼՄ-ների ազդեցության ներքո: Հասարակություն եւ հին ու նոր արժեքների բախում:

## 2. Արտաքին տեսքի հոգեբանական ազդեցությունը

Արտաքին տեսքը իբրեւ լրագրողի այցեքարտ: Արտաքին տեսքը եւ հաղորդման ուղղվածությունը: Ազատ ոճ: Անհեթեթ հագուստ: Պահպանողական հագուստ:

## 3. Լրատվության աղբյուրներ

Պաշտոնական աղբյուրներ: Ինտերնետ: Լրատվական գործակալություններ: Անձնական ծանոթություններ: Վարձու աղբյուրներ (արտասահմանյան փորձ): Աղբյուրների եւ լրատվության ճշգրտում: Լրատվության հաղորդման պայմանների կարեւորությունը: Աղբյուրների բացահայտ կամ գաղտնի լինելը: Քննադատական մոտեցում ստացված լրատվության վերաբերյալ: Նույն լրատվությունը՝ տարբեր աղբյուրներից: Կեղծ լրատվություն: Կեղծ լրատվությունը հաղորդելու պայմանները (արտասահմանյան փորձ): Կեղծ լրատվություն եւ դատական պրոցես (համաձայնություն կեղծ լրատվության աղբյուրի, ԶԼՄ-ի եւ լրատվության զոհի միջեւ):

## 4. Անձնականի եւ մասնագիտականի անջրպետը

Անկաշկանդություն՝ չի նշանակում մտերմություն (ամերիկուհի լրագրող Ջուլիա Կեմերոնի եւ ռեժիսոր Մարտին Սկորսեզեի ամուսնության եւ ապահարզանի պատմությունը): «Աշխատանքային սիրավեպ»: Բիզնես-լանչ: Գործնական հանդիպում լրագրողական նյութի հերոսի հետ ոչ աշխատանքային պայմաններում: Ներկայացուցչական գումար: Հարցազրույց. «Հակամարտ» (կոնֆրոնտացիա): «Չեքքեր» պաշտպանաձեւ (Ռիչարդ Նիքսոնի նախընտրական արշավից):

## 5. Լռությունն իբրեւ հոգեբանական հնարք հարցազրույցի ընթացքում

Զրուցակցին կաշկանդվածությունից ձերբազատելու միջոցներ: Անգլիացի փաստագրական ֆիլմերի հեղինակ Ռեքս Բլյումշտեյնի «լռության» բանալու փորձը: Հարցազրույցի նախնական ծրագրից շեղվելու հնարավորությունը: Թեմայի շրջանցումը: Հարցադրում: Պարզ հարցեր: Զրուցակցին լսելու եւ ընկալելու ունակություն:

## 6. Ուշադրության ճգնաժամ

Թվերի ընկալելի քանակը յուրաքանչյուր նյութում: Անծանոթ անվանումների բացատրությունը եւ կրկնությունը: Շարադրանքի պարզությունը: Գրավոր շարադրանքի մշակումը: Ուշադրության ճգնաժամ: Լրացուցիչ հետաքրքրության անհրաժեշտություն: Ուշադրության ճգնաժամի չորս փուլ: Ուշադրության ճգնաժամի փուլերի հաղթահարման ձեւերն ու միջոցները: Ռադիո եւ հեռուստալուրերի հաղորդման միջազգային չափանիշները:

## 7. Լուրեր: Առաջնահերթ նորություն

Առաջնահերթ նորություն: Կարեւորության չափանիշներ: Արդիականություն: Անհայտ փաստեր: Հետաքրքրություն առաջացնող դեպքեր: Առաջնահերթ նորության հինգ հիմնական նախապայմանները. գլխավոր գործող անձ, դրամատիկական լարվածություն, շահերի բախում, բռնություն: Ակտիվ գործողություն: Նորությունների՝ ընդունված կանոններից շեղման աստիճանը: Հրատապ եւ առաջնահերթ նորությունների տարբերությունը: Հավերժական թեմաներ. տոներ, ծեսեր, բարոյախոսական նյութեր:

## 8. Անձնական կյանքի լուսաբանում

Անձնական կյանքը՝ հասարակության ուշադրության կենտրոնում: Մյութոս եւ իրականություն: Անձնական կյանք եւ լրագրողական հետաքննություն:

## 9. Սթրես: Սթրեսի հետեւանքները

Լրագրողի ստեղծագործական աշխատանքի հոգեբանական առանձնահատկությունները: Արտակարգ դեպքերի վայրում գտնվող լրագրողին բնորոշող վարքագիծը: Սթրեսային պահվածքի նշանները: Սթրեսային իրավիճակի փուլերը: Հետսթրեսային իրավիճակի խանգարումներ: Հետսթրեսային վարքագիծ: Սթրեսը հաղթահարելու ձեւերը: Գոյատեւելու արվեստ:

## 10. Լրատվական ահաբեկչություն

Լրատվական ահաբեկչության նշանները: Ինքնաքայքայման վտանգը լրագրողի աշխատանքում: Լրատվական ահաբեկչության հատկանիշները: Ահաբեկչական լրատվության բացասական ազդեցության հետեւանքները: Լրատվական ահաբեկչությունից պաշտպանվելու միջոցները:

## 11. Հումորը եւ խաղը իբրեւ լիցքաթափվելու միջոցներ

Ի՞նչ է հաճույքը: Հաճույքն իբրեւ լիցքաթափվելու միջոց: Հումորի եւ խաղի տարրերը լրագրության ասպարեզում: Արգելված թեմաներ տոտալիտար համակարգերում: Երգիծանքը եւ տոտալիտար համակարգերը (էստոնուհի գրող Լիլլի Պրոմետի «Ո՞վ է տարածում անեկդոտները» վեպը: Հյուսիսային Կորեայի օրինակը): Հումորը եւ խաղը իբրեւ լրագրողական նոր ժանրեր ստեղծելու միջոցներ: Լրագրողը եւ նրա ստեղծած կերպարը՝ ծաղրանմանում, կեղծանուն, հումորի ու խաղի այլ միջոցներ:

## 12. Որո՞նք են հասկանալի լինելու պայմանները

Լեզվի ընդհանրություն: Մասնագիտական լեզու: Զարգացման գործոն: Լիարժեք լրատվություն: Շարադրանքի տրամաբանություն: Ուշադրության կենտրոնացում: Շարադրման արագություն եւ հստակություն: Ուշադրության շեղումը շարադրանքից դեպի անձը: Համոզման բանաձեւ: Հասկանալու եւ ընդունելու տարբերակները (ամեն ինչ հասկանալ եւ ոչինչ չընդունել: Չհասկանալ, բայց ընդունել): Մատչելի շարադրանք: Գաղափարի կարեւորության ապացույց: Ինչպես արժանանալ լսարանի համակրանքին: Փաստարկում: Փաստարկման ընդունման պայմանները: Փաստարկումները ներկայացնելու հերթականությունը:

## 13. Ատրակցիայի (համակրանքի) ձեւավորում

Անձի նկատմամբ ուշադրություն: Ինչպես հիշել նոր ծանոթների անունները: Հաճոյախոսություն: Երկիմաստ հաճոյախոսություն: Չափազանցված հաճոյախոսություն: Հաճոյախոսություն-խրատ: Իրավիճակին հակասող հաճոյախոսություն:

## 14. Կինետիկ նշաններ (ժեստ, շարժում, պահվածք)

Կինետիկ նշանների ինֆորմացիոն բնույթը: Պահվածքի ենթագիտակցական ազդեցությունը ունկնդրի, զրուցակցի վրա: Նստվածքը, գլխի դիրքը, ձեռքի շարժումը եւ դրանց ազդեցությունը զրուցակցի վրա:

## 15. Ինչպես ներազդել հեռուստադիտողի վրա

Ալիքի ընտրությունը: Հեռուստաժամի կարեւորությունը: Հեռուստալսարանի ուղղվածությունը: Տեքստի կարեւորությունը (հակիրճ, հետաքրքիր, վառ, պատկերավոր ձեւավորված միտք): Պահել ունկնդրի, հեռուստադիտողի հետաքրքրությունը: Թեմայի քննարկումը շարունակելի դարձնել նաեւ հարակից ԶԼՄ-ներում: Ներգործել ունկնդրի, հեռուստադիտողի գիտակցության, հասկացողության, բարոյական չափանիշների վրա: Ներգործության հետեւանքների մասին տվյալներ ստանալ անալիտիկ հետազոտությունների միջոցով:

## 16. PR. Հասարակական կարծիք ձեւավորելու գործոններ

Ինչ է PR-ը: PR-լրատվություն: PR-սուբյեկտ: Սեւ PR:

## 17. Հոգեբանական թեստեր

1. Սեփական ուժերի արժեքավորում,
2. հաջողության բանաձեւ,
3. միջանձնային հաղորդակցություն:

## Գրականություն

### Ա. Հայերեն

1. Էրիկ Ֆիխթելիուս, «Լրագրության 10 ոսկե պատվիրան», «Ինտերնյուսի» մատենաշար, Երեւան, 2001
2. Ռոզա Եղիազարյան, «Լրագրության հոգեբանություն», ԵՄԱ, Երեւան, 2004 թ.

### Բ. Ռուսերեն

3. Александр Панасюк, "Как победить в споре, или исскуство убеждать". М., "Олимп" АСТ, 1998
4. "Основы репортерства". Изд-во "БАГ", Promediq/Irex, Ереван,
5. Алан Розенталь. "Создание кино и видеофильмов как увлекательный бизнес", М., изд-во "Пульс", 2001
6. "Средства массовой информации в Британии", Министерство иностранных дел и по делам Содружества, Москва, 2002
7. Ричард Харрис, “Психология массовых коммуникаций”. С-Пб, “Прайм-ЕВРОЗНАК”, “Издательский дом НЕВА”, М., “ОЛМА-ПРЕСС”, 2002
8. Почепцов Г. Г. Паблик Рилейшнз для профессионалов. “Рефл-бук” “Ваклер” Москва - Киев. 2000.
9. Джон Кехо. Подсознание может все. Попурии. Минск. 2004.
10. Психология и этика делового общения. Учебник. Юнити. Москва. 2003.

# ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

*Հեղինակ՝ **Նաղաշ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ***
*ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի*
*ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկայի*
*ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ.*

*Դասընթացը նախատեսված է ժուռնալիստիկայի*
*ֆակուլտետի բակալավրիատի առաջին կուրսի համար*

## Ծրագրի նպատակը

Պատկերացում տալ ԶԼՄ գործունեության, ժուռնալիստի մասնագիտական աշխատանքի ձեւերի եւ մեթոդների, ժուռնալիստական տեքստի գործառութային յուրահատկությունների եւ նրա տեխնոլոգիական բնութագրերի մասին:

**Դասընթացը պետք է օգնի ուսանողներին յուրացնելու հետեւյալ խնդիրները՝**

ա/ ծանոթություն իրականության ճանաչման հիմնական եղանակներին եւ միջոցներին, լսարանին նյութը մատուցելու մեթոդներին,
բ/ ժուռնալիստի աշխատանքի սկզբունքների մեթոդների, ստեղծագործական հնարքների յուրացում,
գ/ ժուռնալիստական գործունեության տեխնոլոգիաների, ժուռնալիստի մասնագիտական վարպետության հիմքերի յուրացում,
դ/ ժուռնալիստական տեքստի մշակման հմտություն:

## 1. Դասընթացի տեղը ժուռնալիստական կրթության համակարգում

Առարկան մասնագիտական կարեւոր դասընթաց է, որը հնարավորություն է տալիս ուսանողներին պատկերացում կազմել ժուռնալիստի աշխատանքի յուրահատկությունների մասին եւ ժուռնալիստիկայի վերաբերյալ տեսական գիտելիքները զուգակցել ԶԼՄ-ում մասնագիտական աշխատանքի հմտությունների ձեռքբերմանը:

## 2. Դասընթացի բովանդակության պահանջվող մակարդակը

Դասընթացի շարադրանքը, նրա բովանդակության ընկալումը հենվում է ժուռնալիստիկայի տեսության նորագույն ըմբռնումների եւ արդի ԶԼՄ-ի պրակտիկայի վրա:

Ժուռնալիստիկայի դերը աշխարհի ամբողջական պատկերի վերարտադրման եւ ինտեգրացիոն գործընթացների համապատկերում: ԶԼՄ-ի քաղաքակրթական եւ մարդասիրական նշանակությունը:

## 3. Դասընթացի բովանդակությունը

### Մաս 1

Ժուռնալիստիկան որպես ստեղծագործության տեսակ: Տեքստը որպես ժուռնալիստի ստեղծագործության հիմնական արտադրանք:

**1.1.** Լսարանի գործոնները (տեղեկատվության ներկայացվող պահանջները եւ լսարանի հետաքրքրությունները): Մտավոր եւ կազմակերպչական գործոնների փոխհարաբերությունը ժուռնալիստի ստեղծագործական աշխատանքում:

**1.2.** Ժուռնալիստի անհատականությունը որպես համակարգված ամբողջություն: Ժուռնալիստի մասնագիտական գործունեության առանձնահատկությունները: Ժուռնալիստի անհատականության ինքնահաստատման ոլորտը, բովանդակություն եւ կառուցվածք: Ժուռնալիստի ընդունակությունները: Ինտելեկտը, երեւակայությունը: Հիշողությունը եւ ուշադրությունը: Էմոցիաները, զգացմունքները, հակումները: Ազատության դերը անհատականության կառույցում: Ժուռնալիստի աշխատանքային գործունեության հոգեբանական վերլուծություն: Տեղեկատվության ընթռնողական-տեսական մշակման հոգեբանական խնդիրները: Գործունեության հաղորդակցական տեսանկյունը: Ֆունկցիոնալ իրադրությունները աշխատանքային գործունեության մեջ: Գործունեության հոգեբանական տեսանկյունները առանձնահատուկ եւ էքստրեմալ պայմաններում:

**1.3.** Ժուռնալիստական ստեղծագործության մեթոդները: Գիտական-մասնագիտական ճանաչման աղբյուրները, ձեւերը, մեթոդներ եւ իրականության իմաստավորումը, էականին հասնելու մեթոդները (էմպիրիկ եւ տեսական): Սոցիալական գիտությունների մեթոդները եւ իրականության ժուռնալիստական ճանաչման ընդհանուր մեթոդաբանություն: Մեթոդի ընտրությունը՝ կախված խնդիրներից: Ժուռնալիստական ճանաչողության ավանդական մեթոդները՝ զրույց, փաստաթուղթ, զննում: Ժուռնալիստիկայում մասնավոր գիտելիքների մեթոդների կիրառում (սոցիոլոգիա, հոգեբանություն, գրականագիտություն, լեզվաբանություն, տեղեկատվության տեսություն, պատմություն եւ այլն): Մեթոդների ընդհանուր բնութագիրը: Դրանց կիրառման չափանիշները (սահմանները): ԿՍՀ-ի (կոնկրետ սոցիոլոգիական հետազոտություններ) մեթոդները: Ուսումնասիրվող սուբյեկտի հետ փոխներգործության միջոցները: Չմիջնորդավորված փոխներգործություն (փորձ եւ հետազոտում): Ժուռնալիստիկայում սոցիոլոգիական մեթոդների օգտագործում: Մեթոդների կիրառման սահմանները: Ժուռնալիստը, հրատարակչությունը, լսարանը՝ որպես սոցիոլոգիայի օբյեկտ: Լսարանի սոցիոլոգիական հետազոտություն: Գիտակցության օբյեկտիվ գործոնների ուսումնասիրման մեթոդները (զննում, փաստաթղթերի վերլուծում, պրակտիկ գործողությունների վերլուծություն): Գիտակցության չմիջնորդավորված գործոնների ուսումնասիրման մեթոդներ (հարցումներ): Չպլանավորված հարցում (անձնական, հեռակա): Պլանավորված հարցում (անձնական հարցազրույց): Անհատական եւ խմբակային հարցաթերթիկի կազմում եւ հեռակա հարցում: Հարցազրույցի ֆոկուսավորում (նպատակադրված, բեւեռացված հարցազրույց): Ժուռնալիստիկայում հոգեբանության մեթոդների օգտագործում: Թեստավորում: Մեթոդի սահմանափակում: Կենսագրական մեթոդի կիրառումը ժուռնալիստիկայում: Կենսագրությանը անդրադառնալու կանոնները: Կենսագրական հարցազրույցի տեսակները: Հրատապ, բաց հարցազրույց: Մոդելավորումը ժուռնալիստիկայում: Հետեւյալ տարրերը ներառող իրադրային մոդելների վերլուծում՝ տեքստի կազմման իրադրություն, լրատվական ալիքի բնութագրում, բնույթ, հաղորդատվության բովանդակություն եւ ձեւ, անհատը որպես ԶԼՄ-ի սպառող: ԶԼՄ-ի գործունեության պրագմատիկ կանխորոշում: Հասարակական կածիքի հարցման արդյունք (մոնիտորինգ):

## Գրականագիտական մեթոդները ժուռնալիստիկայում

Պրոբլեմաթեմատիկ եւ գեղարվեստավերլուծական մեթոդներ: Համաժամանակյա-նկարագրական եւ դիախրոնիկ (պատմական հաջորդականությամբ առնվող) - համեմատական մեթոդներ: Գրականագիտական հիմնական հասկացություններ՝ սյուժե, ֆաբուլա, կոմպոզիցիա, պրոբլեմ (խնդիր), սեռեր, տեսակներ, գրական ստեղծագործությունների ժանրեր:

## Սոցիալական հոգելեզվաբանության մեթոդներ

Բառի եւ արտահայտության ընկալման խնդիրը՝ սոցիալական եւ հոգեբանական համատեքստում:

## Պատմության մեթոդները ժուռնալիստիկայում

Կենսագրական եւ ինքնակենսագրական մեթոդ: Համեմատական վերլուծության մեթոդ:

## Տրամաբանության մեթոդը ժուռնալիստիկայում

Տրամաբանության ընթացակարգը եւ տեղեկատվության փոխանցման ձեւերը (թեզիս, փաստարկում, ապացուցման ձեւ, հերքում): Կանխորոշումը ժուռնալիստական ստեղծագործոթյունների մեջ: Կանխորոշման նպատակներն ու տեսակները:

**1.4.** Տեղեկության խմբավորումը եւ կուտակումը, ֆիլտրումը, դասակարգումը, սիստեմավորումը, տիպավորումը, մեկնաբանությունը, վարկածների առաջադրումը ժուռնալիստական վերլուծական ստեղծագործության մեջ՝ որպես երեւույթների օրինաչափությունների բացահայտման միջոցներ:

**1.5.** Արտահայտչամիջոցների կիրառման մեթոդները ժուռնալիստական տեքստում: Փաստական միջոցներ (փաստագրական)՝ հավաստում, նկարագրություն ռեպորտաժային վերստեղծում, բնութագրում, մեկնաբանություն, տիպականացում: Մշակութաբանական եւ գաղափարաբանական միջոցներ (քաղվածք, շարադրանք, վերաիմաստավորում, բողոքարկում, բանավոր դրվագավորում):

# ՄԱՍ 2
# Տեղեկատվության աղբյուրները: Տեղեկատվության արձանագրման մեթոդները: Աշխատանքը փաստի հետ:

**2.1.** Բանավոր աղբյուրներ (հարցազրույց, հարցումներ), գրադարանային աղբյուրներ (կատալոգներ, տարեգրություններ եւ այլն), տեղեկություններ վարչական կառույցներից (հաշվետվություններ, բրիֆինգների նյութեր): Վիճագրական տեղեկագրեր, տեղեկատուներ՝ հանրապետական եւ մարզային իշխանությունների կողմից հրապարակվող: Օրենսդիր իշխանության մարմիններ, գործադիր իշխանության մարմիններ, իրավապահ մարմիններ, պե-

տական ձեռնարկություններ, կոմերցիոն ֆինանսական կառույցներ, տեղեկատվական մարմիններ, մասնավոր անձեր եւ այլն: Մամլո կենտրոնների եւ PR գործակալությունների նյութեր: Ներխմբագրական օժանդակ նյութեր (լրագրերից վերցված կտրվածքների համալիր, թեմատիկ հավաքածու, հանրագիտարաններ, համակարգչային տվյալների բանկեր): Տեղեկատվության աղբյուրների հետ աշխատանքի մեթոդաբանությունը: Փաստաթղթերի հետ աշխատանքի յուրահատկությունը, փաստաթղթերի օգտագործման իրավական հիմքերը: Մարդկանց՝ տեղեկատվության աղբյուրների հետ աշխատանքի առանձնահատկությունները: Շփման հոգեբանական ձեւերը:

**2.2.** Աշխատանք փաստերի հետ: Փաստերի ընտրությունը ժուռնալիստական ստեղծագործության համար: Փաստերի ստուգման մեթոդաբանությունը: Փաստերի արձանագրման ձեւերը: Աշխատանքը վավերագրական աղբյուրների հետ. փաստաթղթերի փնտրում, փաստաթղթերի յուրացում, վավերագրական տվյալների ստուգում:

## ՄԱՍ 3
## Տեքստը՝ որպես ժուռնալիստական ստեղծագործության հիմնական արտադրանք:

**3.1.** Գաղափար տեքստի մասին, նրա ծագումը: Ձեւավորման եւ ստեղծագործական զարգացման փուլերը: Տեքստը որպես գրական ստեղծագործության հիմնական նյութ: Տեքստակազմման օրենքները եւ ժուռնալիստական տեքստի ազդեցության մեխանիզմները լսարանի վրա: Տեքստը որպես նշանների հաջորդական հաղորդում կազմող կառույց: Գրավոր տեքստը որպես միասնական տեքստային կառույցի տարր տպագրությունում: Գրավոր տեքստի կապը տեքստային ուրիշ մոդելների հետ, առաջին հերթին՝ պատկերագրականի: Հիմնական եւ լրացուցիչ միջոցների կազմավորումը տպագրությունում:

**3.2.** Ժուռնալիստական տեքստի կառույցը: Ընդհանուր դասակարգման նշաններ: Տեքստի կառուցման մեջ տրամաբանության կանոնների պահպանման անհրաժեշտությունը: Ներածությունը, ֆաբուլային գործողությունների ծավալումը եւ ավարտական մասը ժուռնալիստական տեքստում: Տեքստային մոդելի ընտրության (բանական կամ զգացական) եւ լսարանի վրա ազդեցության արդյունավետությունը: Ամբողջացնող եւ շերտավորող ժուռնալիստական տեքստեր, դրանց կիրառման առանձնահատկությունները: Փաստարկի դերը տեքստակառուցման գործում, նրա տեղը նյութի կառույցում եւ դրա հետ կապված տարբեր տիպի տեքստերի մոդելավորման մեջ՝ հակակուլմինացիոն, բրգաձեւ, կուլմինացիոն: Լսարանի կողմից դրանց ընդունման առանձնահատկությունները: Հաղորդագրության միակողմանի եւ երկկողմանի ձեւեր, փաստարկների եւ հակափաստարկների առկայությունը տեքստում՝ որպես գործոններ, որոնք ազդում են մոդելավորման գործընթացի վրա: Ինքնուրույնությունը, նպատակաուղղվածությունը՝ գրավոր տեքստի հիմնական նշան:

Կառուցվածքը որոշող բոլոր գործոնների փոխկապակցվածությունը:

## ՄԱՍ 4
## Ժուռնալիստական տեքստի գործառույթները, նշանակությունը, նպատակները, խնդիրները, ներգործման միջոցները:

**4.1.** Տեքստը որպես տեղեկատվության կրող: Լրագրության բնույթն ու էությունը: Լրատվություն եզրույթի լայն եւ նեղ մեկնաբանությունները: Լրատվության հատկությունների բազմաձեւությունը: Որոշիչ հատկությունները, նյութականի եւ սոցիալականի միասնականությունը, անընդհատությունը: Պրագմատիկ հատկությունները՝ նորություն, արժեք, հաղորդակցում: Դինամիկ յուրահատկությունները՝ կրկնվողականություն, օգտագործման բազմակիություն: Ինֆորմացիայի տեսակները հաղորդման եւ ընդունման միջոցով (տեսողական, աուդիո-շոշափողական, զգացմունքային եւ այլն): Լրատվության ներգործության հոգեֆիզիոլոգիական յուրահատկությունները: Ընկալումը որպես լրատվության վերամշակման գործընթաց: Հասարակական նշանակություն ունեցող լրատվության տեսակները՝ զանգվածային, սոցիալական եւ անհատական: Փաստը որպես ժուռնալիստական ստեղծագործության հիմք: Փաստ հասկացությունը: Փաստերի բազմաձայնությունը՝ դրական, բացասական, զուգակցի շարադրած փաստեր: Ուսումնասիրված եւ չուսումնասիրված փաստեր: Փաստեր, որոնք վերցված են ներկայից, անցյալից, անձնական կյանքից, ուրիշների կյանքից եւ կոլեկտիվի կյանքից: Կարծիք հասկացությունը: Կարծիքի կառուցվածքը: Մեկնաբանությունը տեքստում: Մեկնաբանությունների տեսակները (թեմատիկ, պրակտիկ, գիտելիքների վրա հենված, ենթադրությունների վրա հենված): Վարկած հասկացությունը: Կանխորոշումներ եւ ենթադրություններ: Նախապես վերամշակված, կոնկրետ, ծավալուն, ինքնաբերաբար ծագող, ոչ կոնկրետ, չբացահայտված, խնդիրը ամբողջապես լուծող կանխորոշումներ:

**4.2.** Ժուռնալիստական տեքստի գործառույթները: Տեքստի բացահայտողական եւ ճանաչողական դերը: Գիտելիքների գիտական, արտագիտական եւ նախագիտական ձեւերը՝ ներկայացված ժուռնալիստական ստեղծագործությունների մեջ:

Իմացությունը որպես արտացոլում, իրականության հորինում եւ ժուռնալիստական տեքստը: Ճշմարտությունը որպես իմացության նպատակ: Իմացության հիմնավորման խնդիրը ժուռնալիստական տեքստում: Մեկնաբանությունը որպես ըմբռնման միջոց եւ բացատրություն: Սոցիալական փաստը եւ նկարագրությունը: Սոցիալական փաստի վավերականության խնդիրը: Ժուռնալիստի կողմից արժեքավորվող կողմնորոշումներ: Ժուռնալիստական երկի մոտիվների բազմազանությունը: Պատկերացումների անձնական բնույթը. նպատակների, առաջադրանքների եւ ժուռնալիստական երկի արտադրանքի մասին: Ճշմարտության եւ համամարդկային արժեքների մարմնավորման ձգտումը եւ մասնագիտական կարիերան: Աշխարհայացքային տեսանկյունը, ճանաչողության պրոցեսի կոնցեպցիան եւ ժուռնալիստական տեքստը: Սոցմշակութային գնահատականների օբյեկտիվ հիմքերի բազմազանությունը ժուռնալիստիկայում: Տեքստի անթոլոգիական (հատընտիր) ֆունկցիաները: Աշխարհի միասնականությունը եւ նրա բազմազանությունը ժուռնալիստական ստեղծագործության մեջ: Բնությունը, կյանքը, մարդը ժուռնալիստական տեքստում:

Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ, ինքն իր նկատմամբ՝ ժուռնալիստական տեքստում: Տեքստի հաղորդակցական գործառույթը: Տեքստի ներգրավվածությունը պրագմատիկ հարաբերությունների մեջ: Տեքստը որպես շփման պարզ եւ հարմար միջոց: Տեքստի՝ զգացմունքային, հոգեբանական, գեղագիտական յուրահատկությունների անցումների բազմազանությունը տալու հնարավորությունը: Ժուռնալիստական տեքստում ընկալման համար մատչելիությունը, կոնկրետությունը, գեղագիտությունը: Ժուռնալիստի կողմից տեքստի կոդավորումը եւ սպառողի ապակոդավորումը: Ժուռնալիստական տեքստի իմաստաբանական գործառույթը: Զանգվածային հաղորդակցության տեքստերի իմաստային կառուցվածքը: Բովանդակային մասերի փոխադարձ կապը եւ կշռադատվածությունը: Ընդհանուր բովանդակության հիմնական տարրերը: Թեման եւ հատկանիշները: Հաստատող դրույթներ եւ վերլուծական գնահատական: Ընդհանուր բովանդակության երկրորդական տարրերը (դրույթների լուսաբանում, նկարագրող, ընդհանրացնող, իրադարձությունների տեսակների տրամաբանական սխեմաները): Ժուռնալիստական տեքստի գաղափարական ուղղվածությունը: Տեքստի հիմք, ենթատեքստ եւ համատեքստ:

**4.3.** Տեքստը որպես իմաստաբանական հարաբերությունների կրող: Հայերենի գործառական ոճերի հատկանիշները ԶԼՄ տեքստերում: Չափանիշների եւ արտահայտչաձեւերի տարրերը տեքստերում: Հրապարակախոսական, գեղարվեստական եւ գիտական տեքստերի տարբերությունները:

Տարրերի ոճական միասնությունը (խորագիր, վերնագիր, գրավոր տեքստ) լեզվի իմաստաբանական եւ շարահյուսական մակարդակներում:

**4.4.** Հրատարակման տիպակազմավորման բնութագրերի ազդեցությունը ժուռնալիստական տեքստի վրա: Հրատարակման դրոշմադրումը: Նշանաբանը: Հիմնադիր-կազմակերպիչը: Հրատարակության որակական-քանակական բնութագրերը: Ընթերցողների կատեգորիաները: Բովանդակությունը: Պարբերականությունը, հրատարակության ֆորմատը: Տպաքանակ: Նկարագրության մասշտաբ: Լրատվության գերադասելի աղբյուրները: Նյութի մատուցման օպերատիվությունը: Հրապարակման չափը: Շարադրանքի մատչելիությունը: Փաստերի վավերականացումը: Ընթերցողի հետ շփվելու ձեւը եւ ոճը: Լսարանի սոցիալ-մասնագիտական կարգավիճակը: Գործնական ակտիվության ոլորտը (գործարարներ, քաղաքական գործիչներ եւ այլն): Պատկանելությունը քաղաքական եւ հասարակական կազմակերպություններին, պետական-վարչական ղեկավարությանը, տերիտորիալ ընդհանրությունը, տարիքը, սեռը:

## ՄԱՍ 5
## Ժուռնալիստական ստեղծագործության նախապատրաստման տեխնոլոգիան տպագրվող հրատարակությունների համար:

**5.1.** Ժուռնալիստական ստեղծագործության սկզբնական փուլերը: Գաղափարի ծնունդը որպես ժուռնալիստական երկի ելակետ: Գաղափարի ձեւակերպումը եւ մշակումը: Խնդրի առարկայական հիմնավորումը (հասարակական եւ գաղափարական հակասություններ): Խնդրի առաջադրումը եւ վերլուծումը, նրա էական յուրահատկությունների վերհանումը: Խնդրի լուծման միջոցները (պարզից բարդը, չիմացածից իմացածը): Ժուռնալիստական թեմայի ծնունդը: Թեմայի առաջադրումը: Թեմայի կոնկրետացում եւ մասնավորում: Մտքերի ծնունդը: Հեղինակային մտքի հիմնավորվածությունը: Մտքի մարմնավորումը երկի բովանդակային կառույցի մեջ: Մտքի հեղինակային մեկնաբանությունը:

**5.2.** Փաստը որպես ժուռնալիստական երկի հիմք: Փաստի նշանակությունը ժուռնալիստական երկում: Փաստերի տիպերը: Առօրեական, էմպիրիկ, տեսական փաստերի փոխկապակցվածությունը ժուռնալիստական երկում: Փաստական նյութի հետ աշխատելու սկզբունքները՝ փաստերի համակարգումը եւ խմբավորումը արտացոլվող երեւույթների յուրահատկությունների հիման վրա (արձանագրման միջոցներով, նկարագրման ձեւերով, ընդհանրացման մակարդակով): Փաստի իմաստավորումը՝ փոխկապակցված ուրիշ փաստերի հետ: Հեղինակային կարծիք: Փաստի գնահատումը եւ մեկնաբանությունը տեքստում:

**5.3.** Ժուռնալիստական նյութի ընդլայնման մեջ տրամաբանական հետեւություն անելու յուրահատկությունները:

Նյութի մտային-համակարգային, պրոբլեմաթեմատիկ կազմակերպումը: Հեղինակային դատողությունների տրամաբանությունը (բացատրություն, լուսաբանում): Տրամաբանական ապացույցների համակարգի կառուցում: Փաստարկների տիպերը հրապարակային երկի կառուցվածքում (գիտափաստական, վավերագրական-փաստական, արժեքային):

Փաստարկման գիտական միջոցների օգտագործումը հրապարակվող տեքստում, կոնկրետացում եւ վերացարկում, վարկածների, ապացույցների միջոցների օգտագործումը (զուգադրություն եւ մոդելավորման հիմքի վրա): ոսքային ձեւեր՝ տրամաբանական լռություն, քերականական լռություն: Պատկերի դերը փաստարկման մեջ: Հակադրույթ: Վավերականության էֆեկտի ստեղծումը: Հիմնավորման ընդունումը «կենդանի զննման» միջոցով: Ճշմարտության կոլեկտիվ փնտրման ձեւը:

**5.4.** Ժուռնալիստական երկի կառուցվածքը: Նյութի կառուցվածքի եւ երկի նպատակների պայմանավորվածությունը սոցիալական հարցերով, կենսական նյութով, հեղինակի ստեղծագործական հակումներով: Նյութի հիմնական հատկանիշները՝ բաղկացուցիչ մասերի համաչափությունը, երկրորդականի ստորադասումը գլխավորին եւ այլն: Սյուժետային «ընթացքը» («քայլը»)՝ որպես ժուռնալիստական երկի արտահայտչականության գործոն:

## Հանձնարարվող գրականության ցանկ


1. Абдрашитов Б. М., Учитесь мыслить нестандартно. М., 1996,
2. Абрамян Д. Н., Общепсихологические основы художественного творчества, М., 1994.
3. Алешин Л. И., Защита информации и информационная безопасность. М., 1999,
4. Арутюнова Н. Д., Язык и мир человека., М., 1999.
5. Герасименко В. А., Основы информационной грамоты, М., 1996,
6. Художественное творчество и психология, М., 1991.
7. Ким М. Н., Технология создания журналистского произведения, Изд-во Михайлова, 2002.
8. Копперуд Р., Нельсон Р. П., Как преподносить новости, М., 1998.
9. Прохоров Е. П., Введение в теорию журналистики, М., 2002.
10. Профессия: Журналист, / УП /, М., 2003.
11. Шостак М. И., Журналист и его произведение, М., 1998.
12. Моисеев В. А., Журналистика и журналисты, Киев, 2002.
13. Основы творческой деятельности журналиста /под ред. С. Г. Корконосенко, СПб., 2000/.

# ՕՆ-ԼԱՅՆ ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Ուսումնական ծրագիր մագիստրատուրայի ուսանողների համար

*Պատրաստվել է Երեւանի մամուլի ակումբում*

***World Wide Web as World Wide Wait***
***Համաշխարհային սարդոստայնը՝ համաշխարհային սպասում***

Այս ծրագրի նպատակը հաղորդակցության որակապես նոր տեսակի՝ Ինտերնետի, դրա հնարավորությունների, գլոբալ ցանցի՝ որպես ապագայի լրագրության հիմքի մասին գիտելիքների համակարգի տրամադրումն է ուսանողներին:

Դասընթացի ավարտին ուսանողները պետք է պատկերացում ունենան այնպիսի ոլորտների մասին, ինչպիսիք են.

**I. Ինտերնետ. հաղորդակցության որակապես նոր տեսակ**

**II. Գլոբալ ցանց՝ լրագրողի մասնագիտական գործունեության տեղեկատվական բազա**

**III. Ինտերնետը եւ լրագրությունը**

**IV. Ցանցային լրագրություն**

**V. Ավանդական եւ «նոր» ԶԼՄ-ների ինտեգրացումը**

**VI. Ինտերնետը որպես ընտրությունների լուսաբանման նոր մոդել**

**VII. Ինտերնետը եւ բիզնեսը**

**VIII. Ինտերնետի իրավական կարգավորումը**

**IX. Ինտերնետ եւ էթիկա**

## I. Ինտերնետ. հաղորդակցության որակապես նոր տեսակ

### 1. Ինտերնետը 21-րդ դարի հեղափոխություն հասկացությունը

21-րդ դարում Ինտերնետի զանգվածային տարածումը՝ որպես ԶԼՄ-ների համակարգի զարգացման հեղափոխություն, որն արմատապես փոխեց զանգվածային լրատվամիջոցների մասին եղած պատկերացումները: «Նոր» լրատվամիջոցների ստեղծում, որոնք ներառում են ավանդական ԶԼՄ-ներին բնորոշ յուրահատկությունները եւ միեւնույն ժամանակ հնարավորություն ընձեռում առավել ընդլայնված եւ բազմազան կերպով իրականացնել հաղորդակցման

գործընթացները: Հաղորդակցական եւ տեղեկատվական նոր տեխնոլոգիանե-րը՝ ժամանակից եւ տարածությունից դուրս: Նոր տեղեկատվական միջավայ-րը՝ որպես ապագայի լրագրության հիմք: Հայաստանում Ինտերնետի մուտք գործելու եւ զարգացման պատմությունը:

**2. Ինտերնետը՝ հաղորդակցման նոր արդյունավետ միջոց** հասկացությունը

Ինտերնետի գերակայությունը հաղորդակցման մյուս միջոցների հանդեպ (հեռախոս, ֆաքս եւ այլն): Ինտերնետից օգտվողները՝ որպես հաղորդակց-ման գործընթացի ակտիվ մասնակիցներ: Ինտերնետի կողմից տրամադրվող հաղորդակցման նոր ձեւերը.

*Անհատ-համակարգիչ*՝ տեղեկատվություն ստանալու, ուղարկելու եւ հա-մակարգչում այն պահպանելու հնարավորություն՝ առանց ֆիզիկապես տե-ղում գտնվելու անհրաժեշտության:

*Անհատ-անհատ*՝ տեքստի (էլեկտրոնային փոստ, ֆորումներ, չաթեր եւ այլն), ձայնի (Ինտերնետային հեռախոսակապ) եւ պատկերի (տեսակոնֆե-րանսներ) միջոցով Ինտերնետից ցանկացած այլ օգտվողի հետ հաղորդակց-վելու հնարավորություն:

*Անհատ-մարդիկ*՝ համեմատաբար մատչելի գներով (հաղորդակցման ավանդական եղանակների համեմատությամբ) միաժամանակ անսահմա-նափակ թվով մարդկանց տեղեկատվություն ուղարկելու եւ նրանց համար մատչելի արխիվներ ստեղծելու հնարավորություն:

*Մարդիկ-անհատ*՝ բազմաթիվ մարդկանց մասին տեղեկատվություն հավա-քելու եւ այն համակարգելու հնարավորություն:

*Մարդիկ-մարդիկ*՝ միմյանց հետ միաժամանակյա շփման հնարավորու-թյուն՝ անկախ նրանից, թե ֆիզիկապես որտեղ է գտնվում տվյալ անձը:

## II. Գլոբալ ցանցը՝ լրագրողի մասնագիտական գործունեության տեղեկատվական բազա

**1. Ցանցը՝ որպես համընդհանուր տեղեկատվական տարածություն** հասկացությունը

**ա.** Ինտերնետը՝ որպես տեղեկատվության պահեստարան: Տեղեկատվու-թյան ամենատարբեր աղբյուրների, գիտելիքների բնագավառների եւ դրանց օգտագործման մատչելիության արագ եւ հավասարազոր ապահովում: Ին-տերնետը՝ որպես համաշխարհային գրադարան, տարբեր տվյալների համա-պարփակ պահեստարան, որոնք, անկախ իրենց գտնելու վայրից, միմյանց հետ կապվում են խաչաձեւ հղումների, հիպերտեքստերի (լայնածավալ տեքս-տերի) եւ այլնի միջոցով, ինչն առավելագույնս դյուրացնում է անհրաժեշտ տեղեկատվության որոնումը:

**բ.** Ինտերնետը՝ որպես տեղեկատվության մեգա-աղբյուր, ուր գործում են արտահայտչական բոլոր միջոցները (տեքստ, ձայն, գրաֆիկա, անիմացիա եւ այլն): Ինտերնետի ընձեռած հնարավորությունները. կրթության համակարգերի մոդելացում, տարբեր ոլորտներում տեղեկատվության փոխանակման կատարելագործում, տեղեկատվության մատչելիության ընդլայնում, աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ հրատապ լուրերի ստացում, էլեկտրոնային փոստով հաղորդագրությունների փոխանցում, մասնակցություն ֆորումներին, տարբեր թեմաներով կոնֆերանսներին եւ այլն:

**2. Ինտերնետը՝ լրագրողի կարեւորագույն գործիք** հասկացությունը

**ա.** Ինտերնետը՝ որպես լրագրողին անհրաժեշտ տեղեկությունների որոնման արդյունավետ միջոց. տեղեկատու լուրերից (վիճակագրական, կենսագրական տվյալներ, հասցեներ եւ այլն), դեպքի վայրի ուսումնասիրության հնարավորությունից մինչեւ մասնագիտական խորհրդատվություն, ցանցային հաղորդակցության միջոցով տարբեր հարցերի շուրջ մարդկանց կարծիքների ուսումնասիրում: Ինտերնետի նշանակությունը՝ որպես բազմազան տեղեկատվության աղբյուր նորությունների մոնիտորինգի համար, հրապարակումներին, հարցազրույցներին, վերլուծական նյութերին, լրագրողական հետաքննությանը լավագույնս նախապատրաստվելու միջոց:

**բ.** Ինտերնետի տեղեկատվական-որոնման համակարգերը, օն-լայն ռեժիմում գործող մասնագիտական տվյալների շտեմարանների ուսումնասիրումը՝ որպես հրապարակումների, լրագրողական հետաքննության համար ծավալուն նյութեր արագ ձեռք բերելու հնարավորություն: Կատալոգների դերը անհրաժեշտ տեղակատվության որոնման հարցում (արմատային, բաժանումներ ըստ գիտելիքների լայն ոլորտների, այնուհետեւ՝ մասնավոր բաժինների, ենթաբաժինների, եւ այլն):

**3. Ինտերնետը՝ որպես լրագրողի վիրտուալ աշխատավայր** հասկացությունը

Ինտերնետի հարմարեցումը սեփական կարիքներին որպես տեղեկատվություն գտնելու արագ միջոց: Վիրտուալ աշխատավայրի ստեղծման կարեւորագույն տարրերից է անհրաժեշտ «էջանիշերի» (“bookmarks”/”favorites”), ցանցային ռեսուրսների եւ ծառայությունների դասակարգված հղումների ստեղծումը: Օգտակար եւ հետաքրքիր կարող է լինել նաեւ օգտվողների համար սեփական վիրտուալ տեղեկատուի ստեղծումը (HTML էջեր) Բոբ Դրաքի “My Virtual Reference Desk” ինտերնետային էջի օրինակով, որը տարվա լավագույն էջի կոչման է արժանացել 1998թ. “The Best of the Web” մրցույթում:

**4. Ցանցային ռեսուրսներ** հասկացությունը

Ցանցային ռեսուրսները՝ որպես լրագրողի աշխատանքում անհրաժեշտ անձնական «էջանիշերի» նյութ: Ցանցային ռեսուրսների հիմնական տեսակները.

*Էլեկտրոնային հրատարակություններ*՝ տպագիր պարբերական մամուլի էլեկտրոնային տարբերակներ, զուտ էլեկտրոնային պարբերական մամուլ, որը չունի տպագիր տարբերակ:

*Ինտերնետային հեռուստակայաններ*՝ հեռուստահեռարձակման ընկերությունների էլեկտրոնային տարբերակները:

*Ինտերնետային ռադիոկայաններ*՝ ռադիոկայանների էլեկտրոնային տարբերակներ, զուտ ինտերնետային ռադիոհեռարձակում:

Տպագիր եւ հեռարձակվող ԶԼՄ-ները, էլեկտրոնային պարբերական մամուլը հայկական Ինտերնետում:

*Օն-լայն տվյալների շտեմարաններ*՝ կոմերցիոն եւ ոչ կոմերցիոն էլեկտրոնային տվյալների շտեմարան՝ գիտելիքների տարբեր բնագավառների վերաբերյալ: Տվյալների խոշոր շտեմարանների օգտագործումը որպես ավելի փոքր շտեմարանների մեծ քանակությունից օգտվելու հնարավորություն: Օրինակներ՝ Lexis-Nexis (ամենախոշոր եւ հայտնի կոմերցիոն տվյալների շտեմարաններից մեկը՝ նորություններ, ֆինանսներ, արտոնագրեր, արդյունաբերություն, օրենքներ, բժշկություն եւ այլն), Questel-Orbit (արտոնագրերի եւ առեւտրային նշանների խոշորագույն տվյալների շտեմարան), DialogueWeb (միավորում է ավելի քան 450 տվյալների շտեմարաններ գիտելիքների տարբեր բնագավառների վերաբերյալ), The Internet Movie Database (ֆիլմերի վերաբերյալ խոշորագույն շտեմարան, որը ստեղծվել է ընթերցող-կամավորականների ձեռքով, իսկ հետագայում գնվել Amazon.com ընկերության կողմից) եւ այլն:

*Բառարաններ,* հանրագիտարաններ*, տեղեկատու նյութեր*՝ համընդհանուր օգտագործման գրականություն: Օրինակներ՝ Yahoo! կատալոգ (Reference բաժին), Biography.com (ավելի քան 20000 հոգու կարճ կենսագրական տվյալներ), Reference.com (հնարավորություն է տալիս որոնել, նայել եւ մասնակցել ավելի քան 150000 հեռուստակոնֆերանսների, ինտերնետային ֆորումների) եւ այլն:

*Էլեկտրոնային գրադարաններ*՝ գեղարվեստական եւ մասնագիտական գրականություն: Օրինակներ՝ “ArmenianHouse.org” (հայ գրականության գրադարան), Գուտենբերգ նախագիծ՝ (առավել հայտնի է արեւմտյան էլեկտրոնային գրադարանների շարքում), Մաքսիմ Մաշկովի գրադարան (ռուսերեն լեզվով գրականություն), ռուսական ինտերնետի էլեկտրոնային գրադարանների նորություններ, The On-Line Book Page, DigitalLibrary.net (մասնագիտական գրականություն) եւ այլն:

*Առաքման ցուցակներ (mailing lists)*՝ հետաքրքրող տեղեկատվության ստացում էլեկտրոնային փոստի միջոցով: Օրինակներ՝ «Կռունկ», «Արագիլ» (Հայաստանում եւ սփյուռքում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ նորությունների տրամադրում), Listz (առաքման ցուցակների կատալոգ անգլերեն լեզվով) եւ այլն:

*Կատալոգներ եւ որոնման համակարգեր*՝ ընդհանուր եւ մասնագիտական գրականության որոնում: Օրինակներ՝ AltaVista, Yahoo!, Google, Rambler, շndex, All Search Engines.com, Surf Fast.com որոնման համակարգեր, նախկին ԽՍՀՄ երկրների որոնման համակարգեր, Webnet (օն-լայն ռեժիմի հայկական կատալոգ) եւ այլն:

*Հատուկ ռեսուրսներ լրագրողների համար*՝ լրագրողական գործունեության վերաբերյալ ռեսուրսների կատալոգ (օրինակներ՝ Yahoo: News and Media/Journalism, The Journalistic Resources Page եւ այլն), որոնման խոշոր համակարգերի լրատվական ծառայություններ, լրատվական գործակալությունների էլկտրոնային տարբերակներ («Նոյյան Տապան», «Արմինֆո» եւ այլն), զուտ էլեկտրոնային լրատվական գործակալություններ (օրինակ՝ PanArmenian Network), մասնագիտական միավորումների ինտերնետային էջեր (օրինակ՝ Երեւանի մամուլի ակումբ, Հայաստանի «Ինտերնյուս», Հայաստանի հետաքննող լրագրողների ընկերակցություն եւ այլն), Հայաստանի լրագրողական կազմակերպությունների Ինտերնետ-նախագծեր եւ օն-լայն ռեժիմի ծառայություններ (օրինակ՝ Երեւանի մամուլի ակումբի էլեկտրոնային տեղեկագիրը, Հայաստանի «Ինտերնյուսի»՝ հայաստանյան ԶԼՄ-ների “Media.am” ծառայությունը եւ «Անիվ» ռադիոնախագիծը, Հետաքննող լրագրողների ընկերակցության “Hetq Online”, Տեղեկատվության ազատության կենտրոնի «Դու տեղյակ լինելու իրավունք ունես» ամենամսյա տեղեկագրի էլեկտրոնային տարբերակը եւ այլն), էլեկտրոնային տեղեկատուներ (օրինակ՝ տեղեկություններ հայաստանյան ԶԼՄ-ների մասին Երեւանի մամուլի ակումբի եւ «Ինտերնյուսի» ինտերնետային էջերում, «Ով՝ ով է հայաստանյան լրագրությունում»՝ Հայաստանի մամուլի գործիչների կարճ կենսագրություններ Երեւանի մամուլի ակումբի ինտերնետային էջում եւ այլն):

**5. Էլեկտրոնային փոստը որպես լրագրողին անհրաժեշտ գործիք** հասկացությունը

Էլեկտրոնային փոստը՝ որպես Ցանցի օգտագործման ամենատարածված ձեւերից մեկը: E-mail-ը՝ որպես իր տեղեկատվության աղբյուրների հետ լրագրողի մշտական կապի, լրագրողի եւ ընթերցողների միջեւ շփման, տեղեկատվության փոխանակման ապահովման, հարցազրույցների նպատակով հանդիպումների պատրաստման եւ դրանից հետո հարցերի պարզման հնարավորություն եւ այլն:

## III. Ինտերնետը եւ լրագրությունը

**1. Ինտերնետը՝ որպես հսկայական լրատվական տարածք** հասկացությունը

Նոր տեսակի ԶԼՄ-ները լուրջ մրցակից են ավանդական լրատվամիջոցների համար օպերատիվության, տեղեկատվության մշակման խորության եւ որակի, հիպերտեքստային եւ մուլտիմեդիոն հնարավորությունների օգտագործման տեսակետից, որով նրանք գրավում են ընթերցողներին եւ գովազդատուներին: Ինտերնետային լրագրողների նոր դասակարգի ձեւավորումը, օն-լայն լրագրության զարգացումը եւ դրա յուրահատկությունները, օն-լայն միավորումների եւ «աստղերի» ծագում, ավանդական ԶԼՄ-ներից լրագրողների եւ մեկնաբանների անցում դեպի օն-լայն լրատվամիջոցներ:

**2. Զանգվածային լրատվամիջոցների ինտերնետացում** հասկացությունը

Էլեկտրոնային հրատարակությունները, ինտերնետային հեռուստա-ռադիո հեռարձակումները ձեւափոխում են ժամանակակից տեղեկատվական փո-

խանակումների պատկերը, մամուլի դաշտի զարգացման մակարդակի գնահատման չափանիշները՝ այնպիսի ցուցանիշներով, ինչպիսիք են՝ հեռախոսայնացումը, համակարգչայնացումը, ինտերնետի մատչելիությունը:

**3. Ինտերնետի ավանդը լրագրության ասպարեզում** հասկացությունը

**ա.** *Անձնավորում.* Ինտերնետում սեփական լրագրողական էջերի ստեղծման հնարավորություն: Լրագրող-ընթերցող հակադարձ սերտ կապ. ընթերցողի կողմից հրապարակման հեղինակին էլեկտրոնային փոստով նամակ հղելու եւ արագ ու բանիմաց պատասխան ստանալու հնարավորություն:

**բ.** *Տեղեկատվության ստացման եւ տարածման արագություն.* լրագրողների կողմից նոր տեխնոլոգիաների օգտագործումը՝ իրադարձությունների վերաբերյալ հրատապ տեղեկատվություն ստանալու եւ արագ ու արդյունավետ արձագանք տալու նպատակով:

**գ.** *Տեղեկատվության մատչելիության ընդլայնում.* Ինտերնետի միջոցով առավել մեծ ծավալների տեղեկատվություն ստանալու հնարավորությունը՝ որպես լրագրողական գործունեության որակի բարձրացման միջոց, տարածքային խոչընդոտների վերացում, տեղեկատվության յուրահատուկ աղբյուրներից լրագրողների կախվածության նվազում, իրադարձությունները եւ փաստերը վերարտադրելիս պատասխանատվության բարձրացում, հասարակության այլ ներկայացուցիչների կողմից տեղեկատվության կեղծման փորձերի խոչընդոտում, հասարակության մեջ լրագրողի դերի ամրապնդում, հրապարակումներին ավելի արագ եւ մասնագիտորեն պատրաստվելու հնարավորություն:

**դ.** *Խորացված վերլուծություն.* լրագրողների կողմից նոր տեխնոլոգիաների կիրառումը որպես տեղեկատվության հսկայական ծավալների մեջ անհրաժեշտը գտնելու եւ մանրամասնորեն վերլուծելու, իրադարձություններին ավելի քննադատական եւ մտածված գնահատական տալու հնարավորություն:

**ե.** *Տեղեկատվության հավաստիություն եւ ճշգրտություն.* լսարանի՝ Ինտերնետից օգտվելու հնարավորությունը որպես լրագրողի պատասխանատվությունը բարձրացնելու միջոց. այն փաստը, որ ընթերցողը կարող է գտնել հրապարակման մեջ օգտագործված նախնական նյութը, բարձրացնում է հրապարակման մեջ տեղ գտած տեղեկատվության ճշմարտացիության հանդեպ պահանջկոտությունը:

**զ.** *Բազմակարծության աճ.* նոր տեխնոլոգիաների օգտագործումը հնարավորություն է ընձեռում լրագրողին դառնալու հրատարակիչ եւ կազմակերպելու սեփական հրատարակության թողարկումը, ինչը մեծապես նպաստում է բազմակարծության աճին:

**4. Ինտերնետը եւ տարածաշրջանային համագործակցությունը** հասկացությունը

Ինտերնետի դերը լրագրողների միջեւ տարածաշրջանային համագործակցության զարգացման հարցում: Հարավային Կովկասի լրագրողական կազմակերպությունների եւ ԶԼՄ-ների համատեղ նախագծերը: Տարածաշրջանային ինտերնետ-հրատարակություններ (օրինակ՝ «Մամուլի երկխոսություն»

շաբաթական էլեկտրոնային տեղեկագիրը, որը նվիրված է Հայաստանի, Ադրբեջանի եւ Թուրքիայի հարաբերություններին, «Մամուլի ակումբ» տարածաշրջանային էլեկտրոնային տեղեկագիրը, որը լուսաբանում է Հարավային Կովկասի երկրների քաղաքացիական հաստատությունների եւ միջազգային կազմակերպությունների գործունեությունը, Հարավային Կովկասի երկրների կյանքի մասին «Խաչմերուկ» շաբաթական տեղեկատվական հեռուստաալմանախի էլեկտրոնային տարբերակը, եւ այլն): Օն-լայն հարցազրույցներ Հարավային Կովկասի երկրների քաղաքական եւ հասարակական գործիչների հետ (օրինակ՝ Կովկասի լրագրողների ցանց):

## IV. Ցանցային լրագրություն

### 1. **Ցանցային լրագրություն** հասկացությունը

Ցանցային լրագրություն հասկացությունը՝ որպես մամուլի կառույցներ, որոնք տեղեկատվություն են տրամադրում հսկայական լսարանի: «Նոր» եւ ավանդական լրատվամիջոցների նմանությունները. դրանց հիմնական գործառույթը տեղեկատվության հաղորդումն ու տարածումն է: Օն-լայն լրագրության յուրահատկությունները եւ ավանդական ԶԼՄ-ներից դրա տարբերությունը:

**ա.** Ցանցային հրատարակությունների առավելությունները ավանդական ԶԼՄ-ների հանդեպ:

*Բարձր օպերատիվություն.* հաղորդվող նյութերի ակնթարթային տարածման հնարավորություն, օն-լայն տեղեկավության քանչորսժամյա թարմացում:

*Տեղեկատվության ստացման եւ տարածման բարձր արագություն.* օն-լայն միաժամանակյա հաղորդակցության (chat-եր, ֆորումներ, կոնֆերանսներ եւ այլն) եւ հետագա հաղորդակցության հնարավորություն (էլեկտրոնային առաքումներ, էլեկտրոնային փոստ եւ այլն):

*Տեղեկատվության հաղորդման եւ տեղադրման անսահմանափակ ժամկետներ եւ տարածություններ:*

*Անհրաժեշտ տեղեկատվության որոնում եւ արագ հայտնաբերում:*

*Առանձնահատուկ տեղեկատվության տրամադրման հնարավորություն* մարդկանց փոքր խմբի՝ առանց լայն լսարանին ծանրաբեռնելու անհրաժեշտության:

*Տեղեկատվության անժամկետ պահպանման հնարավորություն* լսարանի համար մատչելի տեսքով, պարբերաբար թարմացվող տեղեկատվական արխիվների առկայությամբ:

*Թեման առավելագույնս ծավալելու հնարավորություն* ակնառու տեսածայնային միջոցների օգտագործման (լուսանկարների, գրաֆիկաների, դիագրամների, մասնագետների հետ ձայնային հարցազրույցների, տեսակադրերի

տեղադրում), հավելյալ տեղեկատվության (ցուցակներ, հղումներ սեփական եւ այլ աղբյուրների եւ այլն) միջոցով, ինտերնետ-հրատարակությունների արխիվների եւ այլ էլեկտրոնային ռեսուրսների մատչելիությունը որպես թեմայի լայն ըմբռնման, լրագրողական հետաքննությունների իրականացման ապահովման հնարավորություն:

*Նվազագույն ծախսեր ցանցային արտադրանքի ստեղծման համար.* ավանդական ԶԼՄ-ների համեմատությամբ՝ էլեկտրոնային հրատարակությունների համեմատաբար ցածր ինքնարժեքը, կենտրոնացման բացակայությունը՝ որպես խթան ինտերնետ-հրատարակությունների, այդ թվում՝ նեղ մասնագիտական եւ անձնական հրապարակումների առավել մեծ քանակության ստեղծման համար, ինչը հանգեցնում է բազմակարծության աճի, խոսքի եւ արտահայտվելու ազատության իրավունքի ամրապնդման:

*Ցանցային հրատարակությունների գրավչությունը լսարանի համար.* բազմազան եւ մատչելի աղբյուրների օգտագործման միջոցով հետաքրքրող տեղեկատվությունը ինքնուրույն ընտրելու հնարավորություն, ժամանակի տնտեսում, հարմար պահի նորություններ ստանալու հնարավորություն՝ առանց կախված լինելու, օրինակ, հեռուստատեսային եւ ռադիոհաղորդումներից:

*Ընթերցողի/հեռուստադիտողի/լսարանի հետ հակադարձ կապ* - ավանդական ԶԼՄ-ների ընթերցողները՝ որպես տեղեկատվության պասիվ ստացող, «նոր» ԶԼՄ-ների լսարանը՝ որպես տեղեկատվական գործընթացի ակտիվ մասնակից եւ հսկիչ, հակադարձ կապի տարբեր ձեւերը (էլեկտրոնային փոստ, ֆորումներ, ինտերակտիվ կոնֆերանսներ եւ այլն):

**բ.** Ցանցային լրագրության թերությունները. հրատարակությունների թողարկման դյուրինությունը եւ գաղտնիությունը պահպանելու հնարավորությունը կարող են առիթ հանդիսանալ ցանցի չարաշահումների համար (գրագողություն, ապատեղեկատվություն, էքստրեմիզմ, պոռնոգրաֆիա, հոգնեցնող գովազդ եւ այլն):

**գ.** Օն-լայն նյութերի տրամադրման հնարքներն ու միջոցները. «ցանցային տեքստի» յուրահատկությունները (սեղմություն, մասնատվածություն, հիպերտեքստային եւ մուլտիմեդիոն հղումների օգտագործման հաշվին լայնացումներ եւ այլն), մոնիտորի էկրանից տեղեկավության ընկալման յուրահատկությունները:

## V. Ավանդական եւ «նոր» ԶԼՄ-ների ինտեգրացումը

**1. Ավանդական ԶԼՄ-ների համագործակցությունը Ինտերնետի հետ, ցանցային տեխնոլոգիաների հետ դրանց զուգամետություն (կոնվերգենցիա)** հասկացությունը

**ա.** Ավանդական ԶԼՄ-ների էլեկտրոնային տարբերակների ստեղծումը որպես լսարանի հետ ավելի սերտ կապ հաստատելու, լսարանի ընդլայնման, տեղեկատվությունն ավելի օպերատիվ եւ արդյունավետ կերպով տարածելու հնարավորություն:

**բ.** Ավանդական ԶԼՄ-ների եւ Ինտերնետի համագործակցության ձեւերը: Տպագիր ԶԼՄ-ների էլեկտրոնային տարբերակները: Լրատվական գործակալությունները եւ դրանց ինտերնետային էջերը. այլ ինտերնետային էջերի համար տեղեկատվության տարածումը, առավել ճանաչված պորտալներում սեփական նորությունների ժապավենի տեղադրումը: Ցանցային ռադիոհեռարձակում՝ հեռարձակում օն-լայն եւ/կամ ձայնագրության ռեժիմում: Կայանների միջեւ ռադիոծրագրերի փոխանակում, լրատվական եւ գովազդային գործակալությունների կողմից ռադիոհեռարձակման հնարավորությունների օգտագործում, հետքրքրող on line հաղորդումները եւ երաժշտությունը ավտոմատ կերպով գտնելու բրաուզեր-ծրագրերի ստեղծում: Ցանցային հեռուստահեռարձակում՝ կաբելային եւ արբանյակային հեռուստատեսություն, թվային հեռարձակումը՝ որպես հեռուստատեսային եւ համակարգչային տեխնոլոգիաների ինտեգրման, բարձր հստակության հեռուստատեսության ստեղծման հիմք: Ցանցային ֆոտոլրագրություն՝ on line (իրական ժամանակի ռեժիմում) եւ off line (նախնական մշակումից հետո Ինտերնետում տեղադրում) ֆոտոռեպորտաժներ: Ինտերնետում ֆոտոռեպորտաժների կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները (թվային սարքեր, Ինտերնետ-տեխնոլոգիաների բազային գիտելիքների տիրապետում, օգտագործման բրաուզեր-ծրագրերի՝ Ինտերնետային էջերի, գրաֆիկական խմբագրերի հետ աշխատելու հմտություններ): Օն լայն նորություններ՝ ավանդական եւ «նոր» մամուլի միավորում օն-լայն նորությունների միացյալ ծառայության ստեղծման նպատակով, առավել հայտնի պորտալներում սեփական նորությունների տեղադրում:

**գ.** Ավանդական եւ ցանցային ԶԼՄ-ների համագործակցության ձեւերը (հղումներ, մեջբերումներ, ռեֆլեքսավորում, ավտոմատ կերպով զուգահեռ ինտերնետային էջերին եւ այլն): Տպագիր եւ հեռարձակվող ԶԼՄ-ները՝ տեղեկատվության եւ վերլուծության աղբյուր ցանցային լրատվամիջոցների համար: Ինտերնետում սեփական ներկայության ապահովումը որպես ավանդական խոշոր ԶԼՄ-ների գործունեության անհրաժեշտ պայման: Զգտում առավելագույնին. սեփական ինտերնետային էջը ոչ միայն տեղեկատվություն պետք է տրամադրի ԶԼՄ-ի եւ դրա արտադրանքի վերաբերյալ, այլեւ հանդիսանա ինքնուրույն տեղեկատվական ռեսուրս:

**2. Ինտերնետի ազդեցությունը լրատվական շուկայի վրա** հասկացությունը

Լրատվական շուկայի կրած փոփոխությունները Ինտերնետում ավանդական ԶԼՄ-ների հայտնվելու հետեւանքով: Փոխադարձ ազդեցության երկու միտում. 1. նորությունների Ինտերնետ-շուկայի քանակական եւ որակական բարելավում Ցանցում ավանդական լրատվամիջոցների հայտնվելու հաշվին, որոնք, լինելով կայացած կառույցներ, ունեն բոլոր հնարավորությունները (մասնագիտական աշխատակազմի եւ համապատասխան նյութական բազայի առկայություն) տեղեկատվության որոնման եւ հավաքման համար: 2. Ինտերնետի վերածումը ավանդական ԶԼՄ-ների համար լրատվության աղբյուրի:

**3. Ավանդական ԶԼՄ-ներում նոր տեխնոլոգիաների՝ Ինտերնետի, ինտերակտիվության ներմուծում** հասկացությունը

**ա.** Ցանցային տեխնոլոգիաների հետ ավանդական ԶԼՄ-ների զուգամետության առավելությունները. լսարանի ընդլայնման հնարավորություն, լսարանի համար իրական ռեժիմում իր կարծիքը հայտնելու հնարավորության ստեղծում, ԶԼՄ-ների վրա հասարակության ազդեցության ուժեղացում եւ հա-

կառակը, գովազդատուների եւ հովանավորների ներգրավման հավելյալ հնարավորություններ, տեղեկատվական դաշտի ընդլայնում, ռիթմի, հաղորդումների, նյութերի բովանդակության փոփոխություն  եւ, որպես հետեւանք, դրանց որակի բարելավում:

**բ.** Ինտերնետը եւ ինտերակտիվ տեխնոլոգիաները լրագրության մեջ: Ավանդական ԶԼՄ-ներում ինտերակտիվ տեխնոլոգիաների օգտագործում: Հրատապ խնդիրների շուրջ ինտերակտիվ հարցումների անցկացում: Հաղորդումների, հոդվածների ինտերակտիվ քննարկումներ, դրանց գնահատում ավանդական ԶԼՄ-ների ինտերնետային էջերում, հանրաճանաչ հաղորդավարների, հեղինակների հետ ինտերակտիվ շփումներ եւ այլն: Ինտերնետի հնարավորությունների օգտագործումը հայկական տպագիր ԶԼՄ-ների եւ լրատվական գործակալությունների կողմից:

**գ.** Ինտերնետը որպես հեռարձակման զարգացման «երրորդ ալիք»: Ինտերակտիվ ռադիոն եւ հեռուստատեսությունը՝ որպես հանդիսատեսին/լսարանին հաղորդման ստեղծող դառնալու հնարավորության ընձեռում:  Հաղորդումներում ինտերակտիվ տարրերի ներմուծում: Հաղորդումներում ինտերնետային կամուրջների կազմակերպում: Հանդիսատեսի հետ ինտերնետ-շփումներ՝ հաղորդման ընթացքում ինտերնետային քվեարկություն, սեփական լսարանի համար օն-լայն խաղերի եւ մրցույթների կազմակերպում, մրցանակների խաղարկություն, ինտերակտիվ մասնակցություն մարաթոններին եւ այլն: Ինտերնետ տեխնոլոգիաները հայկական հեռուստա-ռադիո եթերում:

ԶԼՄ-ների հեղափոխական ընթացքը՝ մուլտիմեդիոն հեռարձակում, որը միավորում է տեքստը, ձայնը եւ գրաֆիկական պատկերները: Տեսաձայնային ԶԼՄ-ների վեբ- էջերը՝ որպես սեփական հեռուստաալիքը գովազդելու հնարավորություն Ինտերնետում՝ սեփական հաղորդումների, նորությունների, եղանակի տեսության վերաբերյալ տեղեկատվություն տեղադրելու, եւ այլ միջոցներով: Վեբ-էջերի ձեւավորումը դրանց հեռուստա/ռադիոտարբերակների նմանության սկզբունքով:

Ինտերակտիվ հեռուստատեսություն՝ անհատական օգտագործման տեղեկատվական մայրուղի: Դրա ծագման պատմությունը՝ առաջին սերվիսային ծառայություններից («պատվերով կինո») մինչեւ հավելվածներ (վճարովի տեսախաղեր, նորությունների անհատական ծրագրերի ստացում, հաղորդումների մասին հավելյալ տեղեկություններ, «խանութներ» եւ այլն): Ինտերակտիվ հեռուստատեսության զարգացումը՝ համակարգիչ-հեռուստացույցի/հեռուստացույց-համակարգչի ստեղծում, մոնիտորի վրա հեռուստատեսային հեռարձակման դիտում, ինտերնետային էջերի բովանդակության համաժամանակացում (սինխրոնիզացիա) հեռուստատեսային հաղորդումների հետ, հեռուստացույց դիտելու եւ Ինտերնետում «թափառելու» միաժամանակյա հնարավորություն:

**4. Ավանդական եւ «նոր» լրատվամիջոցների ինտեգրման հետեւանքները** հասկացությունը

*Լսարանի ընդլայնման տեսակետից.* ավանդական ԶԼՄ-ների լսարանի ընդլայնումը նոր լրատվամիջոցների հեռուստադիտողների/լսարանի/ընթերցողների ընդգրկման հաշվին: Ավանդական եւ ցանցային ԶԼՄ-ների զուգամետությունը որպես լսարանի ուշադրությունը կառավարելու միջոց (դրա ուղ-

ղորդում մեկ լրատվամիջոցից մյուսը, սեփական ինտերնետային էջից դեպի սեփական հաղորդումները եւ այլն): Ինտերնետում ավանդական ԶԼՄ-ների տեղադրումը որպես երիտասարդությանը (ցանցի հիմնական օգտագործողներին) եւ աշխատավայրում հեռուստացույց դիտելու, ռադիո լսելու կամ մամուլ ընթերցելու հնարավորություն չունեցող օգտվողներին գրավելու միջոց: Ինտերնետում ավանդական ԶԼՄ-ներին ներկայացնելը եւ ավանդական լրատվամիջոցներում «նոր» ԶԼՄ-ների PR արշավի կազմակերպումը՝ որպես հնարավորինս լայն լսարանի շրջանում սեփական անունը ճանաչված դարձնելու միջոց:

*Մասնագիտական առումով.* «նոր» լրատվամիջոցների կողմից ավանդական ԶԼՄ-ների հայտնի ժանրերի, որակյալ նորություններ եւ նյութեր պատրաստելու միջոցների օգտագործում: Ավանդական ԶԼՄ-ների կողմից «նոր» լրատվամիջոցների լայն հնարավորությունների օգտագործում՝ որպես լճացումից խուսափելու եւ թարմացվելու միջոց:

*Ծախսերի նվազեցման առումով.* ինտեգրացված միջավայրը որպես տպագիր ԶԼՄ-ների ծախսերի նվազեցման միջոց (տպագրության, առաքման եւ այլ ծախսեր): Հեռուստա-ռադիո ալիքներում նոր տեխնոլոգիաների ներմուծումը (նոր տեսա-ձայնային կայաններ, տեսա-ձայնային տեղեկատվության մեծ ծավալների պահպանման Hard disk-եր եւ այլն)՝ որպես որակյալ հաղորդումների պատրաստման համար պահանջվող ծախսերը նվազեցնելու, բազմազան տեսաձայնային տպավորությունների որակը բարձրացնելու հնարավորություն:

## VI. Ինտերնետը որպես ընտրությունների լուսաբանման նոր մոդել

**1. Ինտերնետը որպես ընտրարշավների եւ ընտրությունների լուսաբանման նոր մոդել** հասկացությունը

**ա.** Ընտրությունները լուսաբանող լրագրողների կողմից նոր հաղորդակցական տեխնոլոգիաների հնարավորությունների օգտագործում: «Վիրտուալ գրասենյակը» որպես աշխատավայրի նոր հասկացություն, որը հնարավորություն է ընձեռում լրագրողին, անկախ նրա գտնվելու վայրից, աշխատել օնլայն ռեժիմում:

**բ.** Ինտերնետը որպես լրագրողական նախաձեռնությունների համար անսահմանափակ հնարավորությունների միջոց:

Առանձին լրագրողների, ԶԼՄ-ների, լրատվամիջոցների կազմակերպությունների, մամուլի մասնագետների կողմից հատուկ էջերի ստեղծում ընտրարշավների եւ ընտրությունների լուսաբանման, ԶԼՄ-ներում ընտրարշավների լուսաբանման մոնիտորինգի իրականացման նպատակով (Երեւանի մամուլի ակումբի, «Ինտերնյուս» Հայաստանի օրինակով):

Ավանդական ԶԼՄ-ների էլեկտրոնային էջերը՝ որպես ընտրությունների վերաբերյալ ուղեկցող, արխիվային նյութերի, օն-լայն տեղեկատվության մատչելիության ապահովման միջոց: Ընտրությունների եւ ընտրական գործընթաց-

ների վերաբերյալ հասարակական կարծիքի հարցումների արդյունքների, գրաֆիկների, դիագրամների տեղադրում: Ինտերակտիվ կոնֆերանսների, ինտերնետային հարցումների եւ քվեարկությունների անցկացում: Օն-լայն ռեժիմում հեռուստաքանավեճերի հեռարձակում, դրանցում ընտրողների մասնակցության հնարավորություն: Ինտերնետի աճող դերը հայաստանյան ԶԼՄ-ների կողմից ընտրարշավների եւ ընտրությունների լուսաբանման հարցում (առաջատար լրատվական գործակալությունների, թերթերի, հեռուստաալիքների օրինակով):

Ավանդական ԶԼՄ-ների կողմից ընտրությունների ժամանակահատվածի համար ընդհանուր տեղեկատվական ծառայության ստեղծում (օրինակ՝ հեռուստաալիք + թերթ):

Ինտերնետում քաղաքական տեղեկատվության տեղադրում: Ընտրությունների ընթացքում քաղաքական տեղեկատվության մատչելիություն անվճար պայմաններով («Նոյյան տապան» լրատվական գործակալության օրինակով):

Ինտերնետում «քաղաքական խաղերի» ստեղծում:

**գ.** Նախընտրական արշավների ընթացքում թեկնածուների կողմից նոր հաղորդակցական տեխնոլոգիաների հնարավորությունների օգտագործում: Թեկնածուի նախընտրական շտաբի «վիրտուալ գրասենյակ»: Թեկնածուների ինտերնետային էջերի տեղծում:

## VII. Ինտերնետը եւ բիզնեսը

**1. Ինտերնետը որպես ԶԼՄ կողմից արտադրվող տեղեկատվության եկամտի աղբյուր** հասկացությունը

Ինտերակտիվ նախագծերի շահութաբերությունը: ԱՄՆ տեղեկատվական ընկերությունների՝ որպես աշխարհի մեծագույն ինտերնետային շուկա փորձը:

**2. Վեբ-նախագծի մարկետինգ** հասկացությունը

**ա.** *Պոտենցիալ այցելուի գրավում.* ինտերնետային սերվերի գրանցում կենտրոնական որոնման համակարգերի թեմատիկ բաժիններում եւ համապատասխան խորագրերում: Միանման թեմատիկայի սերվերների միջեւ հղումների փոխանակում: Հատուկ գովազդային ցանցերի միջոցով գովազդային բաներների փոխանակում, նպատակային բաներային գովազդային արշավի իրականացում, գովազդ ավանդական ԶԼՄ-ներում: Մամլո հաղորդագրությունների, այլ տեղեկատվության ուղարկում: Մասնակցություն Ինտերնետում տեղի ունեցող բաց բանվեճերին:

**բ.** *Այցելուի ընդգրկում մշտապես օգտվողներիի խմբում.* սերվերի բովանդակության անընդհատ թարմացում (նորություններ, վերլուծական նյութեր եւ այլն): Այցելուին հետքրքրող տեղեկատվությունը գտնելու հնարավորության ընձեռում, արխիվի առկայություն: Ինտերնետային էջերում այցելուների համար նորությունների սեփական էջեր ստեղծելու հնարավորության ընձեռում

(պատվերով տեղեկատվության տրամադրում՝ սերվերի հետ օգտագործողին միացնելու միջոցով, ընտրված նորությունների առաքում համակարգչային ցանցով): Օգտագործողներին սեփական կարծիքն արտահայտելու, օն-լայն ռեժիմում միմյանց հետ շփվելու հնարավորության ընձեռում (էլեկտրոնային կոնֆերանսների, բանավեճերի, տարբեր թեմաներով քվեարկությունների կազմակերպում եւ այլն): Միանման ռեսուրսներին հղումների առկայություն՝ դրանց ցանկի անընդհատ թարմացմամբ: Սերվերի աշխատանքի արագություն եւ հեռահաղորդակցությունների որակ, դրանից օգտվելու հարմարություն եւ գրավիչ ձեւավորում, նյութերի շարադրման պարզություն եւ մատչելիություն:

**գ.** *Այցելուի գրանցում.* այցելուի անձնական տվյալների գրանցում նրան հեշտությամբ գտնելու եւ ձեր ծառայությունների նորույթների եւ հնարավորությունների մասին տեղեկացնելու նպատակով: Այցելուին անվճար ռեսուրսների, ծառայության արտոնյալ մուտքի ապահովում (տեղեկություններ ինտերնետային էջի նորությունների վերաբերյալ, մասնակցություն բանավեճերին, որոնման համակարգից օգտվելու հնարավորություն): Էլեկտրոնային փոստով հաղորդվող նորությունների բաժանորդագրություն: Հաճախորդի մասնակցություն ամենատարբեր շահումներով մրցույթների: Ինտերնետային սերվերում հաճախորդի գրանցվելուն նպաստող գործոններն են՝ սերվերի սեփականատեր հանդիսացող կազմակերպության հանդեպ վստահությունը (երաշխիքներ, որ հաճախորդի տրամադրած անձնական տվյալները չեն օգտագործվի այլ նպատակներով), գրանցման արտոնությունների տրամադրումը, գրանցման պարզ ընթացակարգը (դյուրին գործընթաց՝ հաճախորդից անձնական տվյալների նվազագույն պահանջներով եւ տրվող հարցերի նվազագույն քանակով):

**դ.** *Արտադրանքի/ծառայությունների վաճառք հաճախորդին.* գնվող տեղեկատվության որակի հանդեպ հաճախորդի մոտ վստահության ստեղծում (օրինակ՝ որոշակի ժամանակահատվածում անվճար տեղեկատվության տրամադրում եւ այլն): Անվճար տեղեկատվության եւ վճարովի ծառայությունների տրամադրում (օրինակ՝ անվճար տեղեկատվություն եւ վճարովի խորհրդատվություն, տվյալների շտեմարանից, գրականությունից, ավելի լավ որակի պատկերից օգտվելու հնարավորություն՝ բարձր արագության կապի վճարման միջոցով, եւ այլն): Էլեկտրոնային փոստով ընդհանուր եւ մասնագիտական տեղեկատվության առաքում:

**ե.** *Հաճախորդի վերածում մշտական գնորդի.* սեփական պարտավորությունների հստակ, ժամանակին եւ որակյալ իրականացում:

## VIII. Ինտերնետի իրավական կարգավորումը

**1. Ինտերնետի խնդրահարույց ոլորտները** հասկացությունը

**ա.** *Մտավոր սեփականության եւ հեղինակային իրավունքների պաշտպանության ապահովում.* պաշտպանյալ օբյեկտի իրավական ձեւակերպում: Հեղինակային իրավունքների ամրագրում եւ դրանց հետագա ապացուցման երաշխավորում: Ինտերնետում մտավոր սեփականության եւ հեղինակային իրավունքների պաշտպանության ձեւերը:

**բ.** *Գաղտնիության իրավունքի պաշտպանություն.* անձնական տվյալների իրավական պաշտպանություն եւ սեփական տվյալներին մուտք ունենալու քաղաքացիների իրավունք: Անձնական տեղեկատվության եւ անձնական կյանքի իրավունքի պետական վերահսկում (ընտանիք, առողջություն, հաղորդակցության անձեռնմխելիություն եւ այլն):

**գ.** *Անչափահասների իրավունքների պաշտպանություն.* Ինտերնետի անչափահաս օգտագործողների մասին նյութերի տարածման օրենսդրական սահմանափակումներ: Ցանցում անչափահասների գործունեության կարգավորման հատուկ կանոններ: Պատժամիջոցների նախատեսում Ինտերնետում անչափահասներին վնասող նյութերի (պոռնոգրաֆիա, բռնությունների իրահրում եւ այլն) տարածման եւ դրանցից օգտվելու անսահմանափակ հնարավորություն տրամադրելու համար:

**2. Ինտերնետի իրավական կարգավորում** հասկացությունը

**ա.** Ինտերնետի կարգավորման խնդրի հանդեպ երկու մոտեցում՝ Ինտերնետի ինքնակարգավորում ու ցանցային իրավունքի ստեղծում, եւ Ցանցի օրենսդրական կարգավորման ապահովում:

**բ.** Ինչպես համատեղել Ինտերնետում նյութերի տարածման օրենսդրական սահմանափակումները հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանության սկզբունքի հետ: Պետության (մասնավորապես՝ հատուկ ծառայությունների) կողմից Ինտերնետում տեղափոխման, տեղեկատվական հոսքերի փոխանակման վերահսկում եւ բողոքի ակցիաների իրականացում Ինտերնետում գրաքննության դեմ՝ հանուն խոսքի ազատության: Վիրտուալ տարածքում խոսքի ազատությունը, էթիկական հակամարտությունները «նոր լրագրության» հիմնադիր Մեթ Դրաջի, նրա «Դրաջ Ռիփորթ» (Drudge Report) տեղեկատվական էջի եւ նրա դեմ դատավարության օրինակով՝ որպես ամենաաղմկալի դատավարություններից մեկը: ԱՄՆ-ի Ինտերնետային կարգավորման փորձը:

**գ.** Ինտերնետի ստեղծման հետ զուգահեռ տեղեկատվության գոյության նոր պայմանների ծագումը (դրա արտադրման, տարածման եւ վերարտադրման մի շարք սահմանափակումների վերացում) եւ վիրտուալ տարածքում մտավոր սեփականության ու հեղինակային իրավունքի պաշտպանության օրենսդրական լուծումներ գտնելու գերխնդիրը: Ցանցի պետական կարգավորում կամ ցանցային ինքնակարգավորում: Օպտիմալ լուծում գտնելու փորձեր. մտավոր սեփականության, հեղինակային իրավունքի ավանդական օրենսդրության բարեփոխում՝ հաշվի առնելով ինտերնետային միջավայրի յուրահատկությունները, եւ հատուկ ցանցային օրենքի ստեղծում (cyberlaw/weblaw/Internet law):

Մտավոր սեփականության ավանդական օրենսդրության հիմնական սկզբունքների արմատական վերանայման անհրաժեշտությունը՝ «հոսող» տեղեկատվական արտադրանքների պաշտպանության նպատակով (Ջոն Փերրի Բառլոուի «Գինու վաճառք՝ առանց շշերի. գիտակցության տնտեսություն գլոբալ Ցանցում» հայտնի հոդվածի օրինակով):

**դ.** Ինտերնետի ինքնակարգավորման, ցանցային օրենքի ստեղծման խնդիրը՝ մոտ ապագայի անհրաժեշտ բաղկացուցիչ: Ցանցային բովանդակու-

թյուն արտադրողների պաշտպանության հատուկ մարմինների ստեղծում (օնլայն հրատարակությունների ընկերակցություններ, միավորումներ եւ այլն): «Ամոթանքի տախտակ» (Hall of Shame), որում տեղեկատվություն է տեղադրվում Ցանցում հեղինակային իրավունքները ոտնահարողների մասին, եւ այլն:

**ե.** Ինտերնետի օրենսդրական կարգավորման իրավիճակը Հայաստանում: Միջազգային կազմակերպությունների աջակցությունը Հայաստանում ինտերնետային քաղաքականության ձեւավորման գործին (GIPI - Ինտերնետային քաղաքականության գլոբալ նախաձեռնություն):

## IX. Ինտերնետ եւ էթիկա

### 1. Ցանցային վարքականոն/Netiquette հասկացությունը

**ա.** «Նոր» լրատվամիջոցների զարգացումը պայմանավորեց Ցանցում լրագրողական էթիկայի նորմերի խախտումների նոր վտանգավոր միտումները: Ինտերնետից ծագող հիմնական խնդիրները. անձնական էջերի ազատ, անվերահսկելի տեղադրումը թույլ չի տալիս ստուգել տեղեկատվության հավաստիությունը, յուրաքանչյուր օգտվող հնարավորություն ունի հաղորդել ցանկացած տեղեկատվություն, սեփական հայեցողությամբ փոփոխել այն, եւ դրա հետեւանքով աճում են կեղծումների եւ ոչ ստույգ տեղեկատվության տեղադրման դեպքերը, ինչը հանգեցնում է տեղեկատվության ազատության եւ դրա բովանդակության համար պատասխանատվության հավասարակշռության խախտման, տեքստերի եւ պատկերների հետ ինքնակամ վարմունքը խախտում է ժողովրդավարության սկզբունքները (մտավոր սեփականության եւ տեղեկատվության գաղտնիության իրավունք), առիթ հարուցում անձը, հասարակական հաստատությունները վիրավորելու, գրագողության եւ ահաբեկչության համար:

**բ.** Լրագրողների համար Ցանցում վարքականոնների ստեղծման անհրաժեշտություն, որոնք կերաշխավորեն Ինտերնետում անձի եւ տեղեկատվության, հեղինակային իրավունքների պաշտպանությունը: Ցանցային վարքականոնների (Netiquette) իմացությունը՝ որպես ոչ էթիկական արարքներից խուսափելու միջոց: Վարքականոնների պահպանում Ցանցում գործունեության տարբեր տեսակների ծավալման ժամանակ (հաղորդակցություն էլեկտրոնային փոստով, մասնակցություն կոնֆերանսների եւ այլն):

**գ.** Ցանցում մտավոր սեփականության պաշտպանության կանոնների պահպանում. Ինտերնետում հրապարակված նյութերը (տեքստեր, լուսանկարներ, գրաֆիկա, դիզայն, վիճակագրական տվյալներ եւ այլն) օգտագործելիս հղումը աղբյուրին պարտադիր է, ցանցային նյութերի/ դրանց թարգմանությունների հրատարակում հեղինակի համաձայնությամբ, հեղինակային իրավունքի պայմանների պահպանում:

**դ.** Մասնագիտական էթիկայի համընդհանուր սկզբունքների պահպանման անհրաժեշտություն, որոնք կիրառելի են թե ավանդական ԶԼՄ-ների եւ թե ցանցային լրատվամիջոցների հանդեպ (անաչառություն, օբյեկտիվություն, հավաստիություն, պատասխանատվություն, տեղեկատվության աղբյուրների պաշտպանություն եւ այլն):

## Երաշխավորվող գրականության ցուցակ

1. Բ.Ջանփոլադյան: *Քոմփյութերային կիրառական տեխնոլոգիաների հիմունքները: //* Երեւան 2000:
2. Դավիթ Սանդուխչյան: *Ինտերնետ ծառայությունների օրենսդրական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում եւ արտասահմանյան երկրներում:* /Համեմատական վերլուծություն, 2002: //http://internet.media.am
3. Երեւանի մամուլի ակումբ, Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ: *Եվրոպայի ուղին դեպի տեղեկատվական հասարակություն:* /Ժողովածու: // Երեւան, 2000:
4. Սուրեն Վարդումյան: *Էլեկտրոնային կառավարություն. պաշտոնական վեբ-էջեր:* / Հետազոտություն: // http://internet.media.am
5. *Տվյալների վերլուծություն եւ մեկնաբանություն. Ինտերնետի դարաշրջան:* /Հետազոտություն: Ինտերնյուս, 2002 // http://home.media.am/research/index.htm

## Վեբ-ռեսուրսներ

## Հայաստանի լրագրողական կազմակերպությունների վեբ էջեր

6. Երեւանի մամուլի ակումբ - http://www.ypc.am
7. «Ինտերնյուս» Հայաստան ՀԿ - http://www.internews.am
8. Հետաքննող լրագրողների ընկերակցություն - http://www.hetq.am
9. «Ռեգիոն» հետազոտական կենտրոն - http://www.hetq.am/en/region.html
10. Տեղեկատվության ազատության կենտրոն - http://www.hetq.am/en/foi.html

## Հայաստանի լրագրողական կազմակերպությունների ինտերնետ-նախագծեր

11. «Անիվ» ռադիոնախագիծ - http://home.internews.am/aniv/index-r.htm
12. «Դու իրավունք ունես տեղյակ լինելու» ամենամսյա տեղեկագիր - http://www.hetq.am/am/index.html
13. Երեւանի մամուլի ակումբի ամենշաբաթյա էլեկտրոնային տեղեկագիր http://www.ypc.am/YPC_Newsletter/Eng/2000/news_eng.htm
14. «Խաչմերուկ» ամենշաբաթյա ինֆորմացիոն հեռուստահանդես - http://www.perekrestok.am
15. Կովկասի լրագրողների ցանց - http://www.caucasusjournalists.net
16. «Մամուլի ակումբ» էլեկտրոնային տարածաշրջանային տեղեկագիր - http://www.pressclubs.org
17. «Ով ով է հայկական լրագրության մեջ» - http://www.ypc.am/English/WhoIsWho_eng/index.htm
18. Hetq Online - http://www.hetq.am/en/hetq.html
19. «Internet.media.am» - http://internet.media.am
20. «Media.am» սերվեր հայկական ԶԼՄ-ների համար եւ նրանց մասին - http://home.media.am
21. «Media Dialogue» ամենշաբաթյա էլեկտրոնային տեղեկագիր - http://www.mediadialogue.org

## Թերթերի էլեկտրոնային տարբերակներ

22. «Ազգ» - http://www.azg.am
23. «Առավոտ» - http://www.aravot.am
24. «Գոլոս Արմենիի» - http://golos.arminco.com
25. «Դելովոյ էքսպրես» - http://www.express.am
26. «Եթեր» - http://www.eter.am
27. «Երկիր» - http://www.yerkir.am
28. «Իրավունք» - http://www.iravunk.com
29. «Հայոց աշխարհ» - http://www.hayashkarh.am
30. «Նովոյե վրեմյա» - http://www.nv.am
31. «Չորրորդ իշխանություն» - http://www.chi.am
32. «Ռեսպուբլիկա Արմենիա» - http://www.resparm.com
33. «Հայկական ժամանակ» - http://www.hzh.am

## Հեռուստաընկերությունների վեբ էջեր

33. «Ա1+» - http://www.a1plus.am
34. «ԱLS» - http://www.alttv.am
35. «ԱՐՄԵՆԱԿՈԲ» - http://www.mediaconcern.am
36. «Արմենիա» - http://www.armeniatv.am
37. Հայաստանի հանրային հեռուստաընկերություն - http://www.armtv.com
38. «Ինտերկապ» - http://www.interkap.am
39. «Շանթ» - http://www.shanttv.am
40. «Վերսուս» ստուդիա - http://www.versus.am
41. «Ցայգ» - http://www.tsaygtvr.am

## Ռադիոընկերությունների վեբ էջեր

42. «Ազատություն» - http://www.armenialiberty.org
43. «Արձագանք» - http://www.internews.am/public/Ardzaganq
44. Ռադիո «Հայ» - http://www.radiohay.com
45. «Ֆորտունա» - http://www.fortuna.am

## Լրատվական գործակալությունների վեբ էջեր

46. «ԱՌԿԱ» - http://www.arka.am
47. «Արմենպրես» - http://www.armenpress.am
48. «Արմինֆո» - http://www.arminfo.am
49. «Դեֆակտո» - http://www.defacto.am
50. «Մեդիամաքս» - http://www.mediamax.am
51. «Նոյյան Տապան» - http://www.noyan-tapan.am

## Էլեկտրոնային պարբերականներ

52. http://groong.usc.edu
53. http://www.abm.am
54. http://www.aragil.am

55. http://www.armchess.am
56. http://www.armenianow.com
57. http://www.armeniaweek.com
58. http://www.arvest.am
59. http://www.bnagir.am
60. http://www.demkradio.com
61. http://www.hanrapetutyun.am
62. http://www.panarmenian.net
63. http://www.photogroup.am/eastwest
64. http://www.taregir.am

## Այլ ռեսուրսներ

65. http://telecom.synergy.am
66. http://www.airnet.am
67. http://www.armenianhouse.org
68. http://www.circle.am
69. http://www.citiam.com
70. http://www.hightech.am
71. http://www.hra.am
72. http://www.HyeGuide.com
73. http://www.ict.am
74. http://www.knowhow.am
75. http://www.meeting-point.am
76. http://www.port.am
77. http://www.siliconarmenia.com
78. http://www.teletext.am
79. http://www.vost.am
80. http://www.webnet.am
81. http://www.wistcis.arminco.com

## Անգլերեն գրականություն

82. Alan Gahtan's Cyberlaw Encyclopedia // http://www.gahtan.com/techlaw
83. Blumenthal v. Matt Drudge and America Online // http://www.techlawjournal.com/courts/drudge/Default.htm
84. Bob Drudge. *My Virtual Reference Desk.* // http://www.refdesk.com
85. Christopher Callahan. *A Journalist's Guide to the Internet: The Net as a Reporting Tool.* // Allyn & Bacon, 1999.
86. David Donnelly. *MediaFutures.* // http://www.hfac.uh.edu/MediaFutures/home.html
87. David Noak. *From Novelty to Mainstream* // Editor and Publisher, 1999.
88. Jennifer Niederst. *Web Design in a Nutshell.* // O'Reilly & Associates, 1998.
89. Kevin Featherly. *Guide to Building a Newsroom Web Site* // Radio and Television News Directors Foundation, 1998.
90. Louis Rosenfeld and Peter Morville. *Information Architecture for the World Wide Web.* // O'Reilly & Associates, 1998.

91. Mario Garcia. *Redesigning Print For The Web.* // Hayden Books, 1997.
92. *Matt Drudge is a Homo: A Second Source!!!* / The Conformist // http://www.konformist.com/drudgehomo/drudgehomo.htm
93. Matt Drudge. *Drudge Report.* // http://www.drudgereport.com
94. Melinda Mac Adams. *Inventing An On-line Newspaper* // Interpersonal Computing & Technology, July 1995, Volume 3.
95.Oppedahl & Larson // http://www.patents.com/weblaw.sht
96. Outing, Steve. *Newspapers and New Media.* // Sewickley, PA: GATF Press, 2000.
97. Rachel McAlpine. *Web Word Wizardry A Net-Savvy Writing Guide.* // Ten Speed Press, 2002.
98. Ray Kurzweil // http://www.kurzweilai.net
99. Robin Williams and John Tollett. *The Non-Designer's Web Book.* // Peachpit Press, 2000.
100. Roger Fidler. *Mediamorphosis*: *Understanding New Media.* // Pine Forge Press, 1997.
101. Roland De Wolk. *Introduction to Online Journalism: Publishing News and Information.* // Allyn and Bacon, 2001.
102. The Internet in Russia. // IREX - Russia. "POMATUR". Moscow, 2000. Kathleen Wickham. *Perspectives: Online Journalism.* // CourseWise Publishing, 1999.
103. Virginia Shea. *Netiquette.* // Albion Books, 1994.

## Web Resources:

104. AllSearchEngines.com - http://www.allsearchengines.com
105. AltaVista - http://www.altavista.com
106. Biography.com - http://www.biography.com
107. Court TV. The Investigation Channel - http://courttv.com
108. DialogueWeb - http://www.dialog.com
109. DigitalLibrary.net - http://www.digitallibrary.net
110. Electronic Frontier Foundation - http://www.eff.org
111. Electronic Privacy Information Center - http://www.epic.org
112. EthicNet. Databank for European Codes of Journalism Ethics - http://www.uta.fi/ethicnet/index.html
113. Global Internet Liberty Campaign - http://www.gilc.org
114. Global Internet Policy Initiative Armenia. A Joint Project of the Center for Democracy and Technology & Internews - http://www.gipi.am
115. Google - http://www.google.com/
116. Internet Free Expression Alliance - http://www.ifea.net
117. Lexis-Nexis - http://www.lexis-nexis.com
118. Listing of Cases by Copyright - http://www.lovelock.com/cases/titles.html
119. Listz - http://www.liszt.com
120. Media Futures Institute - http://www.mediafutures.com
121. Netiquette Home Page - http://www.albion.com/netiquette/index.html
123. Online Journalism Resource File - http://www.poynter.org
124. Online Journalism Review - http://www.ojr.org
125. Project Gutenberg - http://promo.net/pg

126. Questel-Orbit - http://www.questel.orbit.com
127. Rambler - http://www.rambler.ru
128. Reference.com - http://www.reference.com
129. Ryerson Review of Journalism Online - http://www.ryerson.ca/rrj/
130. SurfFast.com - http://surffast.com
131. The Internet Movie Database - http://www.imdb.com
132. The Journalistic Resources Page - http://www.markovits.com/journalism
133. The On-Line Book Page - http://onlinebooks.library.upenn.edu/
134. Yahoo! - http://dir.yahoo.com/Reference
135. Yahoo! - http://www.yahoo.com
136. Yahoo: News and Media/Journalism - http://dir.yahoo.com/News_and_Media/Journalism
136. շndex - http://www.yandex.ru
137. ZDnet - http://www.zdnet.com

## Ռուսերեն գրականություն

138. Александр Грунцев. Великолепные возможности для творческих людей. // Журнал "Мир медиа XXI", 1/99.
139. Анатолий Опарин. Завтра в газете, сегодня - в Интернете. // Журнал "Мир медиа XXI", 1/99.
140. Холмогоров. Интернет-маркетинг. Краткий курс. // Изд-во. "Питер". СПб., 2002.
Виктор Наумов. Мир виртуальный - права реальные. // Журнал "Мир медиа XXI", 1/99.
141. WEBmedia. Интернет-телевидение // http://webmedia.narod.ru/
142. Джон Перри Барлоу. Продажа вина без бутылок: экономика сознания в глобальной Сети. // http://www.russ.ru/netcult/99-03-26/barlow.htm
143. Евгений Горный. Интернет для журналистов // http://www.russ.ru/netcult/99-05-27/gorny.htm#p0
144. Евгений Горный, Александр Шерман. Инфократия или Конец отчужденного труда. // http://www.guelman.ru/obzory/gorniy.html
145. Евгений Финкель. Интернет. Ваш выход! // http://www.lib.km.ru/page.asp?id=3118&p=1
146. Засурский И.И. Масс-медиа второй республики. // М., 1999.
147. Иванов Д.В. Виртуализация общества. // СПб., 2000.
148. Интернет в России. // IREX - Russia. Изд-во. "ПОМАТУР". М., 2000. Интернет для журналиста. // М., 2001.
149. Кастельс М. Информационная эпоха: экономика, общество и культура. // М., 2000.
150. Кирсанов Д. Веб-дизайн // Изд-во. Символ-Плюс. 2001.
151. Кирсанов Д. Понятный Интернет: практическое руководство по настройке и навигации с Netscape Navigator. // Изд-во. Символ-Плюс. 1996.
152. Кристофер Хамильтон. Сам себе продюсер. // Журнал "Мир медиа XXI", 1/99.
153. Круг Стив. Веб-дизайн или не заставляйте меня думать. // Изд-во. Символ-Плюс. 2001.

154. Ларри Стелл. Юридическая ответственность и Web: путешествие по проблемным зонам // http://www.medialaw.ru/publications/zip/telecom/2/telecom2.html.
155. Павликова М. Сетевые технологии и журналистика: эволюция финских СМИ. / Серия "Практическая журналистика" // Изд-во. РИП-холдинг. 2001.
156. Пол Эдвард Геллер. Конфликт законов в киберпространстве: международное право. // Бюллетень по авторскому праву. М., 1998.
157. Почти все об Internet, WWW и HTML на русском языке // http://www.machaon.ru/digest
158. Право и Интернет // http://www.vic.spb.ru/law/law.htm
159. Ричард Апджон, Холт Раффин. Интернет для журналистов. / Практическое руководство по методам поиска и распространения информации. // http://www.internews.ru/books/internet/contents.html
160. Российский Интернет: накануне больших перемен. // М., 2001.
161. Рэнди Рэддик, Эллиот Кинг. Журналистика в стиле он-лайн. // Изд-во. Вагриус. М., 1999.
162. Сетевой этикет. / Подборка статей по этикету Интернет. // http://www.lib.km.ru/page.asp?id=3144&p=1
163. Средства массовой информации постсоветской России. // М., 2002.

## Интернет-ресурсы

164. Библиотека Максима Мошкова - http://www.lib.ru
165. Городской Кот - http://www.citycat.ru
166. Новости электронных библиотек русского Интернета - http://www.russ.ru/biblio
167. Поисковые системы стран бывшего СССР - http://www.zodchiy.ru/links/search
168. Электронные библиотеки - http://allbest.ru/libraries.htm

# ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱ

*Պատրաստվել է Երեւանի մամուլի ակումբում*

Այս ծրագրի նպատակը ամենատարբեր կոնֆլիկտների (միջանձնային հակամարտություններից մինչեւ գլոբալ միջպետական բախումները) ժամանակ լրագրության դերի եւ խնդիրների մասին ուսանողներին գիտելիքներ հաղորդելն է: Ուսումնառության ընթացքում ուսանողները պետք է պատկերացումներ կազմեն կոնֆլիկտոլոգիայի՝ իբրեւ ժամանակակից գիտության մասին, կոնֆլիկտոլոգիայի հիմնական հասկացությունների մասին՝ իբրեւ սոցիալական խմբերի միմյանց վրա ունեցած ներգործության ու փոխգործակցության գործընթացների արտահայտություն, արժեքների, դրույթների, շահերի, գաղափարների մասին, կոնֆլիկտների ծագման պատճառների մասին, նրանց տիպաբանության եւ կանխման միջոցների, կոնֆլիկտների լուծման կամ թուլացման, ինչպես նաեւ՝ կոնֆլիկտների վերլուծության ու լուսաբանման գործընթացում լրագրողների եւ լրատվամիջոցների դերի ու պատասխանատվության մասին: Դասընթացի ավարտին ուսանողները պետք է գիտելիքներ ունենան հետեւյալ թեմաների վերաբերյալ.

- ԶԼՄ-ների դերն ու պատասխանատվությունը կոնֆլիկտների լուսաբանման ժամանակ
- Կոնֆլիկտոլոգիայի առարկան եւ մեթոդները
- Պատմական ակնարկ եւ կոնֆլիկտոլոգիայի ժամանակակից տեսությունները:
- Կոնֆլիկտների բովանդակությունը, կառուցվածքը եւ սահմանները
- Կոնֆլիկտների պատճառները եւ նրանց արտացոլումը լրատվամիջոցներում
- Կոնֆլիկտների ուսումնասիրման մեթոդները
- Կոնֆլիկտների տիպաբանությունը, լրագրողների կողմից դա հաշվի առնելու անհրաժեշտությունը
- Կոնֆլիկտների նախազգուշացումը, լուծումը, թուլացումը: Լրատվամիջոցների դերն այդ գործընթացներում
- Կոնֆլիկտները վերլուծող ու լուսաբանող հրապարակախոսական նյութերի պատրաստման որոշ առանձնահատկությունները
- Լրագրողը կոնֆլիկտի գոտում

## 1. ԶԼՄ-ների դերն ու պատասխանատվությունը կոնֆլիկտների լուսաբանման ժամանակ

Զանգվածային լրատվամիջոցների դերը կոնֆլիկտների կանխարգելման, կոնֆլիկտների ծագման մասին նախօրոք իրազեկելու, կոնֆլիկտի ընթացքում հասարակության մեջ կողմերի դիրքորոշումները ներկայացնելու, կոնֆլիկտի դադարեցման մեջ:

Զանգվածային լրատվամիջոցների պատասխանատվությունը, կոնֆլիկտների հրահրման եւ սրման անթույլատրելիությունը, տեղեկատվության հավասարակշռվածությունը:

ԶԼՄ-ներում կոնֆլիկտների լուսաբանման էթիկան: Գրաքննությունը եւ ինքնագրաքննությունը զանգվածային լրատվամիջոցներում:

Զանգվածային լրատվամիջոցների համալիր մոտեցումը կոնֆլիկտների լուսաբանմանը: Տարբեր լրատվամիջոցների ոչ միանման մոտեցումը այս կամ այն կոնֆլիկտի լուսաբանմանը: Տեղեկատվական մրցակցություն: Տեղեկատվական պատերազմներ: Զանգվածային լրատվամիջոցների կախումը կոնֆլիկտի նկատմամբ հասարակության վերաբերմունքից:

Զանգվածային լրատվամիջոցներում կոնֆլիկտների լուսաբանման որոշ սկզբունքներ:

**<u>Կոնֆլիկտի ոչ ամբողջական լուսաբանման սկզբունքը:</u>** Հիմնական դրույթները. կրքերը չշիկացնել, ամբիոն չտրամադրել կոնֆլիկտի առավել ծայրահեղական տրամադրություններ արտահայտող կողմերին:

**<u>Կոնֆլիկտի միակողմանի լուսաբանման սկզբունքը:</u>** Հիմնական դրույթները. բոլոր լրատվամիջոցները դրական են վերաբերվում կոնֆլիկտի միայն մեկ կողմին՝ դրանով համախմբելով հասարակությանը կոնֆլիկտի գնահատման առնչությամբ:

**<u>«Համարյա հավասարակշռված մոտեցման» սկզբունք:</u>** Հիմնական դրույթները. կոնֆլիկտի բոլոր կողմերին ամբիոն եւ սեփական տեսակետն արտահայտելու հնարավորություն է տրամադրվում, սակայն կոնֆլիկտի կողմերից մեկին (իբրեւ կանոն՝ առավել ուժեղին) մի քիչ ավելի շատ հնարավորություններ են տրվում (ստեղծվում է այն պատկերը, որ հավասար հնարավորությունների դեպքում կողմերից մեկն «ավելի ճիշտ է»):

**<u>Հավասարակշռված մոտեցման սկզբունք:</u>** Հիմնական դրույթները. զանգվածային լրատվամիջոցները հավասար հնարավորություններ են տրվում կոնֆլիկտի բոլոր կողմերին՝ ջանալով պահպանել չեզոք դիրքորոշում:

ԶԼՄ-ներում կոնֆլիկտների լուսաբանման բոլոր սկզբունքների արժանիքներն ու թերությունները:

Այս ու այն կոնֆլիկտի նկատմամբ հասարակության մեջ համախմբվածության բացակայության հետեւանքները ԶԼՄ-ների համար:

ԶԼՄ-ների դերի որոշակի օրինակներ. ամերիկա-վիետնամական պատերազմը, անգլիա-արգենտինյան միջադեպը Ֆոլկլենդյան կղզիների շուրջ, հայ-ադրբեջանական հակամարտությունը Լեռնային Ղարաբաղի շուրջ, Պարսից ծոցի պատերազմը:

## 2. Կոնֆլիկտոլոգիայի առարկան եւ մեթոդները

Կոնֆլիկտոլոգիան՝ իբրեւ գիտություն սոցիալական խմբերի, խավերի եւ անհատների հակամարտության մասին: Կոնֆլիկտ՝ իբրեւ դիալեկտիկական հակասության մի փուլի փիլիսոփայական մեկնաբանությունը: Կոնֆլիկտն իբրեւ հակասության ծավալում. նույնություն, տարբերություն, հակադրություն, կոնֆլիկտ: Կոնֆլիկտոլոգիայի հիմնական հասկացություններն իբրեւ սոցիալական խմբերի, արժեքների, կանոնների, շահերի, գաղափարների փոխազդեցության եւ միմյանց վրա ներգործության արտացոլում: Ընդհանուր տեսական-վերլուծական հասկացությունները իբրեւ սոցիալական խմբերի եւ անհատների փոխազդեցության դրսեւորում՝ շահեր, հակամարտություն, մրցակցություն, բախում, լարում, բողոք, պայքար, համաձայնություն: Էմպիրիկ հասկացություններն իբրեւ պատճառների, վիճակի ու փոխգործակցության արդյունավետության աստիճանի դրսեւորում. սոցիալական լարվածություն, կա-

ռուցողականություն եւ ապակառուցողականություն, կոնֆլիկտի օգտագործման եւ կարգավորման միջոցները՝ բանակցություններ, պայմանագիր, հարկադրանք, համաձայնություն, փոխզիջում: Կոնֆլիկտի ուսումնասիրման մեթոդները, կոնֆլիկտի ախտորոշումը եւ փորձաքննությունը:

## 3. Պատմական ակնարկ եւ կոնֆլիկտոլոգիայի ժամանակակից տեսությունները

Սոցիալական կոնֆլիկտի ռացիոնալ իմաստավորման առաջին փորձերը հին հունական փիլիսոփայության մեջ: Հերակլիտի եւ Էպիկուրի գաղափարները:

Քրիստոնեական փիլիսոփայություն. Քրիստոսի ուսմունքը:

Վերածննդի դարաշրջան. Թոմաս Մոր, Էրազմ Ռոտերդամցի, Ֆրանսուա Ռաբլե. Ֆրենսիս Բեկոն: Պատերազմների եւ սոցիալական կոնֆլիկտների դատապարտումը մեծ հումանիստների կողմից:

18-րդ դարի անգլիացի դեմոկրատները եւ ֆրանսիացի լուսավորիչները. Վ.Պրիստլի, Շ.Մոնտեսքյո, Դ.Դիդրո, Ժ.Ժ. Ռուսո, Վոլտեր:

Պատերազմների եւ սոցիալական կոնֆլիկտների գնահատման նոր մոտեցումը 19-րդ դարում: Հեգել, Մալթուս, Դարվին, Սփենսեր:

Լ.Գումիլովիչի տեսակետները սոցիալական կոնֆլիկտների էության մասին: Սոցիոլոգիայի ազդեցությունը կոնֆլիկտնեի պրոբլեմատիկայի մշակման վրա: Գ.Զեմմելի «Կոնֆլիկտի սոցիոլոգիան»:

Կոնֆլիկտների ուսումնասիրման հիմնական ուղղությունները. կոնֆլիկտի դիալեկտիկական եւ գործառնական տեսությունները: Կարլ Մարքսի դիալեկտիկական ուսմունքը հակասությունների եւ կոնֆլիկտի մասին:

Ոչ մարքսիստական ավանդույթ. կոնֆլիկտների եւ փոփոխությունների ուսումնասիրման անհրաժեշտությունը: Մաքս Վեբեր, Վիլֆրեդո Պարետո, Ֆրանց Օպենհեյմեր: Կոնֆլիկտի լուծումը իբրեւ հեղինակության եւ իշխանության վերաբաշխում սոցիալական կազմակերպության մեջ. Ռալֆ Դարենդորֆի կոնֆլիկտի դիալեկտիկական տեսությունը:

Կոնֆլիկտը Թալկոտ Պարսոնսի կառուցվածքային-գործառնական տեսության մեջ:

Լյուիս Կոզերի պոզիտիվ-գործառնական կոնֆլիկտի տեսությունը:

Իոհան Գալտունգի համաձայնության եւ կառուցվածային բռնության հայեցակարգը:

Կոնֆլիկտն իբրեւ խաղ՝ Հայզինգի ու Բեռնի հայեցակարգերում:

## 4. Կոնֆլիկտների բովանդակությունը, կառուցվածքը եւ սահմանները

*(Գիտելիքներ, որ անհրաժեշտ են լրագրողին՝ կոնֆլիկտի գնահատման համար)*

«Կոնֆլիկտ» հասկացության սահմանումը: Կոնֆլիկտի բնորոշումը հակասությունների միջոցով: Կոնֆլիկտի աղբյուրը, հիմքերը, պատճառները եւ շարժիչ ուժերը: Սոցիալական կոնֆլիկտի անհրաժեշտ պայմանները. սոցիալական դիրք (կարգավիճակ), տնտեսական վիճակ, որոշակի խմբի, հասարակական-մշակութային այս կամ այն ընդհանրության հետ անհատի նույնականացման աստիճանը: Սոցիալական դիրքը (կարգավիճակը)՝ իբրեւ անհատի եւ սո-

ցիալական խմբերի համար հասանելիի ու հնարավորի սահման («ազատության աստիճանը»), նրա ներգործությունը պահանջմունքների եւ շահերի, ցանկությունների եւ ձգտումների ձեւավորման վրա: Շահերը, պահանջմունքները եւ արժեքներն իբրեւ սոցիալական վարքագծի հիմնական մոտիվներ: Սոցիալական շահերի հակասություններն իբրեւ կոնֆլիկտների հիմնական պատճառ: Սոցիալական կոնֆլիկտի բանաձեւը. «սուբյեկտներ-շահեր-գործողություններ» համակարգ: Սոցիալական կոնֆլիկտի կառուցվածքը եւ տարրերը. հակասությունները՝ կոնֆլիկտի օբյեկտիվ նախադրյալներ (կոնֆլիկտի աղբյուր), մարդիկ իբրեւ տվյալ հակասության կրողներ, որ ներկայացնում են սոցիալական տարբեր շահեր (կոնֆլիկտի սուբյեկտներ):

Կոնֆլիկտի օբյեկտը՝ բարիքներ, ռեսուրսներ, սոցիալական դիրք (կարգավիճակ), կոնֆլիկտի առարկան, կոնֆլիկտի սուբյեկտների բախումը:

Կոնֆլիկտի օբյեկտը եւ առարկան: «Կոնֆլիկտի մասնակիցներ» (կողմեր) հասկացությունը: «Կոնֆլիկտային իրավիճակ» հասկացությունը եւ նրա ծագման գործոնները: «Միջադեպ» հասկացությունը: Կոնֆլիկտի տարածական-ժամանակային սահմանները: Կոնֆլիկտի «ավարտ» եւ «լուծում» հասկացությունները:

Սոցիալական կոնֆլիկտների գործառնությունները. ընդհանուր եւ հատուկ: Կոնֆլիկտի ընդհանուր գործառնությունները. ինտեգրատիվ, կոմունիկատիվ, մոբիլիզացիոն, ապակառուցողական, կառուցողական: Որոշակի սոցիալական կոնֆլիկտի կառուցվածքում դրական ու բացասական սկիզբների հավասարակշռությունը:

Հասունացող կոնֆլիկտի գնահատման համար լրագրողին անհրաժեշտ գիտելիքները. օբյեկտիվ եւ սպառիչ տեղեկատվություն իրադարձությունների մասին, կոնֆլիկտային գործընթացի չափորոշիչները (մասնակիցները, առարկան, հակասությունների էությունը եւ խորությունը), կոնֆլիկտային իրավիճակի զարգացմամբ շահագրգիռ ուժերի որոնումը, հակամարտող կողմերի շահերն արտահայտող մամուլի վերլուծություն: ԶԼՄ-ների դերը հասունացող սոցիալական կոնֆլիկտների լուսաբանման մեջ:

## 5. Կոնֆլիկտների պատճառները եւ նրանց արտացոլումը լրատվամիջոցներում

Շարժառիթը (դրդապատճառ, մոտիվ) իբրեւ այս կամ այն արարքի ներքին, սուբյեկտիվ պատճառ: Անհատների եւ սոցիալական ընդհանրությունների դրդապատճառները: Կոնֆլիկտների խորքային պատճառների եւ դրդապատճառների տարբերությունները: Սոցիալական-ապակառուցողական գործընթացները եւ մասշտաբային կոնֆլիկտային իրավիճակ: Կոնֆլիկտներն իբրեւ օբյեկտիվորեն գոյություն ունեցող սոցիալական հակասությունների ծնունդ եւ դրսեւորում:

ԶԼՄ-ներում կոնֆլիկտի պատճառների եւ շարժառիթների լուսաբանման առավել տարածված որոշ ռազմավարությունները. կոնֆլիկտն անտեսելը կամ մասնակի լուսաբանումը իբրեւ կրքերը «չշիկացնելու միջոց», հասարակական կարծիքի համախմբումը կոնֆլիկտի կողմերից մեկի դեմ (անտեսելով կոնֆլիկտի պատճառները), մասամբ հավասարակշռված մոտեցում (կոնֆլիկտի կողմերից մեկի պատկերում իբրեւ հավանաբար ավելի իրավացի), հավասարակշռված մոտեցում՝ կոնֆլիկտի բազմաշերտ պատկերի՝ կողմերի տեսակետների ներկայացում, պատմական ու վերլուծական էքսկուրսներ:

*Հակասությունների տիպաբանությունը:* Ներքին եւ արտաքին, սկզբնական եւ երկրորդային, թշնամական եւ ոչ թշնամական. կառուցվածքային եւ ոչ կառուցվածքային, կառուցվածքային եւ գործառնական, հիմնական եւ ոչ հիմնական, երկարատեւ, կարճատեւ եւ անցողիկ հակասություններ: Որոշ ժամանակակից հակասություններ. հակասություն շուկայի ու պետության միջեւ, հակասություն բնակչության հարստացման ու հարստազրկման միջեւ, հակասություն ռացիոնալ տնտեսավարման ու քաղաքական կազմակերպության սկզբունքների եւ առանձին խմբերի աճող պահանջարկների միջեւ, հակասություն գլոբալի եւ տեղայինի միջեւ, հակասություն բնապահպանության եւ տնտեսական աճի միջեւ: Օբյեկտիվ եւ սուբյեկտիվ հակասություններ:

ԶԼՄ-ների դերը կոնֆլիկտի կողմերի (մասնակիցների) հակասությունների օբյեկտիվ եւ արագ լուսաբանման մեջ:

## 6. Կոնֆլիկտների ուսումնասիրման մեթոդները

Կոնֆլիկտոլոգիայի մասին գիտելիքների ստացման հոգեբանական մեթոդիկաներ (անհատական զրույցներ, ներանձնական կոնֆլիկտի վերհանման տարբեր մեթոդիկաներ, կոնֆլիկտային իրավիճակներում որոշակի տիպի մարդկանց վարքագծի որոշարկման Կ. Թոմասի մեթոդիկան, տեստերի օգտագործում՝ մարդկանց սրված կոնֆլիկտայնության վերհանման նպատակով):

Կոնֆլիկտոլոգիայի վերաբերյալ գիտելիքների ստացման սոցիալ-հոգեբանական մեթոդիկաներ. (դիտարկումներ, սոցիոմետրիա, հարցումներ, կոնֆլիկտների հետահայաց վերլուծություն, փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձեր):

Միջխմբային կոնֆլիկտների վերլուծության որակական մեթոդներ (վերլուծություն, համադրում, ինդուկտիվ եւ դեդուկտիվ, պատմական, տրամաբանական մեթոդներ եւ համեմատություն):

Միջանձնային կոնֆլիկտների ախտորոշման մոդուլային մեթոդիկա, սոցիալական կոնֆլիկտների վերլուծության իրավիճակային մեթոդ (հետահայաց կամ անմիջական), միջխմբային եւ միջպետական կոնֆլիկտների մաթեմատիկական մոդելավորում:

Լրագրողի աշխատանքը կոնֆլիկտոլոգիայի գիտական մեթոդիկաների որոշակի տվյալների հետ. դիտարկումների, սոցիոմետրիկ հետազոտությունների, սոցիոլոգիական հարցումների արդյունքների, պատմական եւ փաստագրական տվյալների օգտագործում կոնֆլիկտի մասին նյութերի նախապատրաստման ընթացքում:

Կոնֆլիկտի վերլուծության որակական տվյալների եւ սոցիալ-հոգեբանական հետազոտությունների արդյունքների օգտագործում ԶԼՄ-ներում՝ կոնֆլիկտների լուսաբանման խմբագրական քաղաքականության մշակման նպատակով:

## 7. Կոնֆլիկտների տիպաբանությունը, լրագրողների կողմից դա հաշվի առնելու անհրաժեշտությունը

Կոնֆլիկտների տիպաբանության կառուցման տեսական եւ մեթոդոլոգիական հիմքերը: Կոնֆլիկտների տիպաբանությունը ըստ կոնֆլիկտի մասնակիցների (կողմերի):

Միջանձնային կոնֆլիկտներ: «Անհատ-հասարակություն», «անհատ-սոցիալական ինստիտուտ» կոնֆլիկտներ: Միջխմբային կոնֆլիկտներ եւ սոցիալական հանրությունների կոնֆլիկտներ: «Սոցիալական հանրություն-սոցիալական ինստիտուտ» կոնֆլիկտներ:

Սոցիալական կոնֆլիկտներ:

Կոնֆլիկտների տիպաբանությունը ըստ ոլորտների:

Սոցիալ-տնտեսական կոնֆլիկտ. տնտեսական ոլորտի կոնֆլիկտն իբրեւ մրցակցություն ռեսուրսների, արտադրության միջոցների, նոր տեխնոլոգիաների եւ արտադրանքի սպառման համար, ինչպես նաեւ՝ մրցակցություն աշխատատեղերի, աշխատանքի հնարավորության համար: Տնտեսության ոլորտում կոնֆլիկտների հակվածություն. ակունքները եւ պատճառները: Տնտեսության ոլորտում մրցակցային գործողությունների ձեւերի բազմազանությունը եւ կոնֆլիկտային վարքագիծը: Տնտեսական կոնֆլիկտի սոցիալական առումները. պայքար տնտեսական գերիշխանության, ազգային հարստության արդարացի բաշխման համար, կոնֆլիկտներ աշխատանքի պայմանների եւ վարձատրության պատճառով:

Քաղաքական կոնֆլիկտ. քաղաքական ոլորտում կոնֆլիկտներն իբրեւ սոցիալական խմբերի եւ հանրությունների եւ նրանց քաղաքական վերնախավի պայքար՝ քաղաքական ինստիտուտների, քաղաքական ղեկավարման եւ պետական կառավարման մեխանիզմների ձեռքբերման եւ կիրառման համար: Իշխանության եւ հասարակության մեջ գերիշխանության բաշխումը քաղաքական վերնախավերի միջեւ իբրեւ քաղաքական կոնֆլիկտի առարկա: Պետական իշխանության ինստիտուտների կոնֆլիկտներ: Կոնֆլիկտներ իշխանության թեւերի միջեւ: Կոնֆլիկտներ տարբեր մակարդակների իշխանությունների միջեւ: Քաղաքական փոխզիջում: Տարատեսակ համաձայնություններ սոցիալական խմբերի, կուսակցությունների, շարժումների միջեւ:

Քաղաքական ծայրահեղականություն (էքստրեմիզմ): Քաղաքական կոնֆլիկտների լուծման եւ իրագործման արմատական ձեւերը: Սոցիալական պայթյուն: Քաղաքական հեղաշրջում. բռնի բնույթ, ոչ լեգիտիմություն, հակաօրինականություն, հակաժողովրդավարություն:

Էթնիկ կոնֆլիկտ. էթնիկ հանրություններն իբրեւ կոնֆլիկտների սուբյեկտներ: Սոցիալական համերաշխության ազգային սկզբունքը: Ազգայնականությունը եւ ազգային ծայրահեղականությունը: Էթնոկրատիա: Ազգամիջյան կոնֆլիկտների տիպաբանություն: «Չկառավարվող հույզերի» կոնֆլիկտներ: Էթնոքաղաքական կոնֆլիկտներ: Ազգային պետականությունների ինստիտուտների կոնֆլիկտներ:

Կոնֆլիկտի լուծում մասնակիցների կողմից կամ երրորդ կողմի միջամտություն:

Էթնիկ կոնֆլիկտի կարգավորման առավել արդյունավետ ճանապարհ. կոնֆլիկտը պայմանավորող հակասությունների վերացում, կոնֆլիկտի օբյեկտի վերացում, կոնֆլիկտի օբյեկտի բաժանում կողմերի միջեւ, կոնֆլիկտի օբյեկտի երկկողմանի օգտագործման հերթականության կամ այլ կանոնների սահմանում, փոխհատուցում կողմերից մեկին՝ օբյեկտի մյուս կողմին հանձնելու դիմաց, կողմերի հարաբերությունների տեղափոխում այլ հարթություն եւ այլն:

Կոնֆլիկտների տեսությունների եւ էթնոկոնֆլիկտների տեսությունների նմանություններ եւ տարբերություններ:

Միջազգային կոնֆլիկտ. միջազգային կոնֆլիկտի սահմանումը:

Միջազգային կոնֆլիկտի ծագման պատճառները: Կոնֆլիկտների տեսակները: Միջազգային կոնֆլիկտների ընթացքի դինամիկան եւ հիմնական փուլե-

րը: Պատերազմը եւ տեխնոլոգիական առաջընթացը: Միջազգային կոնֆլիկտների նոր տեսակները: Միջպետական եւ քաղաքացիական պատերազմներ: Իրավաբանական կոնֆլիկտների, կազմակերպական-կառավարչական կոնֆլիկտների, մշակութային եւ կրոնական կոնֆլիկտների հիմնական առումները:

Կոնֆլիկտների տիպաբանությունն ըստ կոնֆլիկտների առարկայի.
- կոնֆլիկտներ կենսապայմանների պատճառով
- շահերի բախման կոնֆլիկտներ
- արժեքային կոնֆլիկտներ

Կոնֆլիկտների տիպաբանությունն ըստ սոցիալական հետեւանքների.
- հաջող
- անհաջող
- կառուցողական
- ապակառուցողական

Կոնֆլիկտների տիպաբանությունն ըստ պայքարի ձեւերի.
- խաղաղ
- ոչ խաղաղ

Կոնֆլիկտների տիպաբանությունն ըստ լարվածության.
- թույլ
- միջին
- ուժեղ

Կոնֆլիկտների տիպաբանությունն ըստ կողմերի վարքագծի կամ ընթացքի բնույթի.
- պասիվ
- ակտիվ

Կոնֆլիկտների լուսաբանման ժամանակ միջոցների ընտրողականություն զանգվածային լրատվամիջոցներում՝ ըստ հասարակության համար կոնֆլիկտների կարեւորության աստիճանի: Այս կամ այն կոնֆլիկտի առնչությամբ խմբագրական ռազմավարության մշակում, կոնֆլիկտի լուսաբանման համար աշխատանքային խմբի ստեղծում: Աշխատանք մասնագետների հետ ըստ տվյալ կոնֆլիկտի տեսակի:

## 8. Կոնֆլիկտների նախազգուշացումը, լուծումը, թուլացումը: Լրատվամիջոցների դերն այդ գործընթացներում

Կոնֆլիկտների կառավարում: Կոնֆլիկտների եւ կոնֆլիկտային իրավիճակների կանխատեսում: Կոնֆլիկտների պատճառների նախազգուշացում: Համագործակցության աջակցության ու զարգացման մեթոդներ: Կոնֆլիկտների կառավարման հիմնական սկզբունքները:

Կոնֆլիկտի կառավարումն իբրեւ տվյալ կոնֆլիկտի կառուցվածքի վերլուծություն, կոնֆլիկտի փուլերի որոշարկում, նրա լուծման մեթոդների մշակում եւ կիրառում: Միջնորդի դերը: Միջամտություն կոնֆլիկտին: Կոնֆլիկտի կառավարման ռազմավարական եւ մարտավարական մեթոդները: Կոնֆլիկտի կողմերի վարքագծի եւ գործողությունների մոդելներ:

ՁԼՄ-ների դերը եւ պատասխանատվությունը կոնֆլիկտի կանխատեսման եւ պատճառների նախազգուշացման մեջ: Խմբագրական ռազմավարությունը իբրեւ միջոց՝ կոնֆլիկտի սկզբի, զարգացման, ավարտի կամ նախազգուշացման վրա ներգործելու:

Կոնֆլիկտների կարգավորման եւ լուծման՝ լուսաբանման համար ընդունելի սխեման ՁԼՄ-ներում. կողմերի՝ կոնֆլիկտային իրավիճակների հիմքում ընկած շահերի համարժեք բնութագրումը, կոնֆլիկտի լուծման համար հաշտարար դատավորի որոնումը, հակամարտող կողմերին խնդրի ոչ խաղաղ լուծման հնարավոր հետեւանքների մատնանշումը, սեփական գծի հետեւողական պաշտպանությունը կոնսենսուսի ձեռքբերման համար, բանակցություններում այլ մասնակիցների ներգրավումը, որը թույլ կտա ելք գտնել կոնֆլիկտային իրավիճակից:

Կոնֆլիկտների կանխարգելման միջոցները.
- կազմակերպական
- հոգեբանական
- հաղորդակցական
- տեղեկատվական

Կոնֆլիկտի լուծումը. ռազմավարություններ, միջոցներ եւ հնարքներ: Բանակցային գործընթացի դերը սոցիալական կոնֆլիկտների լուծման մեջ:

Բանակցություններն իբրեւ առավել արդյունավետ միջոց՝ կողմերի հակամարտությունը հաղթահարելու համար: Բանակցային գործընթաց սկսելու կողմերի նախադրյալները. հակամարտող կողմերի համար, բացի հակասություններից, նշանակալից ընդհանուր շահերի առկայությունը, ըմբռնում կամ համաձայնություն ձեռքբերելը, որ առավել շահավետ է հակամարտող կողմերի համար, քան այլընտրանքները, բանակցելու ցանկությունը՝ փոխադարձ բավարարող ելքի որոնումներում: ՁԼՄ-ների դերն ու պատասխանատվությունը հակամարտող կողմերին բանակցային գործընթացում ներգրավելու համար: Հակամարտող կողմերի լրագրողների շփումների նշանակությունը:

Բանակցությունների տարբերակները՝ ըստ Կ.Դոկտուրոուի.

● կողմերից յուրաքանչյուրն ունկնդրում է մյուս կողմի փաստարկները եւ հրաժարվում է իր որոշ պահանջներից,

● կողմերը ձեռք են բերում հավասար իրավունքներ, բանակցությունների ճանապարհով փոխզիջման են հասնում,

● կողմերը դիմում են ուժի, որպեսզի իրենց տեսակետները պարտադրեն,

● հակամարտողների ուժերը հավասար չեն եւ առավել թույլ կողմը (կամ առավել խելամիտ կողմը) նահանջում է,

● ենթադրվող որոշումների թիվը մեծանում է, որը հանգեցնում է նոր դժվարությունների, հատկապես այն դեպքերում, երբ կողմերը հստակ նպատակներ չունեն:

Բանակցությունների արարողությունները: Բանակցությունների ընթացքում կոնֆլիկտների սրմանը հակազդող վարքագծի որոշարկումը. հակառակորդի տեսակետի նկատմամբ հարգանք ու ըմբռնում, քննարկման առարկայի հստակ ձեւակերպում, ընդհանուր որոշման որոնում:

Ամերիկացի հետազոտողների խորհուրդները բանակցություններ վարելու շուրջ. բանակցությունների արարողությունը եւ բովանդակությունը, պրոբլեմի համաձայնեցված ընկալումը, համատեղ որոշման ձգտումը, արդարացի մոտեցում սեփական եւ օտար տեսակետներին:

Բանակցություններ արտակարգ իրավիճակներում. կառավարվող վարքագիծ ու հույզեր, բարենպաստ մթնոլորտ պրոբլեմի քննարկումից առաջ, փոխըմբռնում առանց ճնշումների:

Բանակցությունների ժամանակ կատարվող առավել տարածված սխալները. գերազանցություն եւ առավելություններ ունեցողի դիրք ընդունելը, հին վիրավորանքներին ու հակառակորդի խոցելի տեղերին անդրադառնալը, «հաղթվածի» ու «հաղթողի» որոնումները:

Բարոյական եւ էթիկական նորմեր, ողջախոհություն, կոնֆլիկտների կարգավորման սովորույթներ եւ ավանդույթներ: Կոնֆլիկտների ոչ բռնի լուծումներ: Զանգվածային լրատվամիջոցների դերը կոնֆլիկտների ոչ բռնի լուծումներում:

<u>**Առավել հայտնի հետազոտական եւ կրթական կենտրոնները, կոնֆլիկտոլոգիայի պրոբլեմներին, խաղաղարար գործունեությանը եւ բանակցություններին, կոնֆլիկտները լուսաբանող լրագրողների իրավունքների պաշտպանությանն առնչվող լրագրողական միջազգային կազմակերպությունները.**</u> Խաղաղության ուսումնասիրման եւ կոնֆլիկտների լուծման կենտրոն (Ավստրալիա), Լուվենի կաթոլիկ համալսարանին կից Խաղաղության խնդիրների ուսումնասիրման կենտրոն (Բելգիա), Մեյսոնի համալսարանին կից Կոնֆլիկտների վերլուծության ու լուծման կենտրոն (ԱՄՆ), Լանկաստերի համալսարանին կից Խաղաղության ուսումնասիրման Ռիչարդսոնի ինստիտուտ (Մեծ Բրիտանիա), Մերիլենդի համալսարանի Միջազգային զարգացման եւ կոնֆլիկտների կարգավորման կենտրոն (ԱՄՆ), Ուպսալայի համալսարանի Խաղաղության եւ կոնֆլիկտների ուսումնասիրման ինստիտուտ (Շվեդիա), Հարվարդի համալսարանի բանակցությունների ծրագիր (ԱՄՆ), Խաղաղության ուսումնասիրման միջազգային ինստիտուտ Օսլոյում (Նորվեգիա), Խաղաղության ամերիկյան ինստիտուտ Վաշինգտոնում (ԱՄՆ), Միջազգային հարաբերությունների «Կլինգենդեյլ» ինստիտուտ (Նիդեռլանդներ), Քարտերի կենտրոն (ԱՄՆ), «Միջազգային տագնապ» (Մեծ Բրիտանիա), Լրագրողների պաշտպանության կոմիտե, Նյու Յորքի համալսարանի Պատերազմի, խաղաղության եւ ԶԼՄ-ների կենտրոն (ԱՄՆ), Պատերազմի եւ խաղաղության լրագրության կենտրոն (Մոսկվա), Լրագրության եվրոպական կենտրոն, Պատերազմի եւ խաղաղության լուսաբանման ինստիտուտ, Լրագրողների միջազգային ֆեդերացիա, «Լրագրողներ առանց սահմանի», ԶԼՄ-ների բազմազանության ինստիտուտ, Արտակարգ լրագրության կենտրոն (Ռուսաստան), Ինտերնյուս (մասնաճյուղեր ունի Հարավային Կովկասում), Երեւանի մամուլի ակումբ, Ադրբեջանի լրագրողների «Ենի նեսիլ» միավորում, BS Press ասոցիացիա (Վրաստան), Ստեփանակերտի մամուլի ակումբ, Վրաց-օսեթական տեղեկատվական կենտրոն, աբխազական մեդիա ակումբ, Լրագրողների «Հարավային Կովկաս» միջազգային ասոցիացիա եւ այլն:

## 9. Կոնֆլիկտները վերլուծող ու լուսաբանող հրապարակախոսական նյութերի պատրաստման որոշ առանձնահատկությունները

Գիտելիքների անհրաժեշտ պաշարն իբրեւ հիմք՝ կոնֆլիկտները վերլուծող ու լուսաբանող նյութերի պատրաստման համար. պատմություն, տնտեսություն, կոնֆլիկտի երկրի կամ տարածաշրջանի բնակչություն, կոնֆլիկտի նախապատմություն, հակամարտող կողմերի դիրքորոշումներ, հակամարտող

կողմերի ղեկավարներ կամ առաջնորդներ, բնակչության աջակցություն, կոնֆլիկտի կողմերում գտնվող ուժեր:

Նյութի նախապատրաստման եւ հրապարակման ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել կոնֆլիկտի կողմերի ազգային, գաղափարական, պատմական, կրոնական եւ այլ բնույթի առանձնահատկությունների սրված ընկալումը եւ նման բնույթի սխալների դեպքում սրված արձագանքի հնարավորությունը:

Բռնության եւ վայրագության, կոնֆլիկտների ժամանակ հաճախադեպ՝ խաղաղ բնակչության տառապանքների տեսարանների լուսաբանման դեպքում լրագրողների էթիկան եւ ինքնագրաքննությունը:

Կոնֆլիկտի կողմերի եւ կոնֆլիկտում չներգրավված կողմերի արձագանքը հաշվի առնելու անհրաժեշտությունը կոնֆլիկտը լուսաբանող կամ վերլուծող նյութի՝ նման տեսարանների նկատմամբ:

Անհրաժեշտ է հիշել, որ կոնֆլիկտի լուսաբանմանը մասնակցող զանգվածային լրատվամիջոցները ոչ միայն հասարակական կարծիք են ձեւավորում, այլեւ կարող են ներգործել կոնֆլիկտի սկզբի, ընթացքի, ավարտի կամ շարունակման, սրման վրա: Այդ առանձնահատկությունների հաշվառումը նյութի հաշվառման կամ հրապարակման գործում:

## 10. Լրագրողը կոնֆլիկտի գոտում

Լրագրողը եւ միջազգային մարդասիրական իրավունքը: Միջազգային մարդասիրական կազմակերպությունների վերահսկողությունը միջազգային մարդասիրական իրավունքների պաշտպանության վրա: Առավել հայտնի միջազգային մարդասիրական կազմակերպությունները, որոնց ներկայացուցիչների հետ լրագրողը կարող է առնչվել միջազգային կոնֆլիկտի գոտում. Կարմիր խաչի (Կարմիր մահիկի) միջազգային կոմիտե, ԵԱՀԿ, «Բժիշկներ առանց սահմանի», «Միջազգային համաներում», «Լրագրողներ առանց սահմանի», ՄԱԿ-ի փախստականների եւ այլ անձանց գործերով գլխավոր կոմիսարի վարչության առաքելություն:

Ժնեւյան կոնվենցիայի Լրացուցիչ թիվ 1 արձանագրության 79-րդ՝ «Լրագրողների պաշտպանության միջոցներ» հոդվածը: Զինված կոնֆլիկտի գոտում աշխատող լրագրողին անհրաժեշտ հմտություններ ու գիտելիքներ: Թշնամական միջավայրում աշխատող լրագրողների համար Քեյնի եւ Բրաունի անգլիական հատուկ ջոկատայինների դպրոցը: Առաջին բժշկական օգնության ցուցաբերման գիտելիքներ: Ինչպես պետք է հագնվի լրագրողը զինված կոնֆլիկտի գոտում: Զինվորական արտահագո՞ւստ, թե՞ քաղաքացիական հագուստ: Լրագրողը եւ զենքը: Զենք ինքնապաշտպանության համար: ԶԼՄ-ների ներկայացուցիչների վարքագծի կանոններ մարտական գործողությունների գոտում: Համատեղ կանոններ, որ ընդունել են Associated Press - ը, British Broadcasting Corporation-ը, CNN-ը, ITN Network-ը, Reuters-ը. Ինքնապաշտպանության եւ անվտանգության հատուկ դասընթացի պահանջը «թշնամական միջավայրում» աշխատող բոլոր հաստիքային եւ արտահաստիքային աշխատակիցների համար, պարտադիր ապահովագրում եւ հատուկ «պաշտպանական սարքերի» տրամադրում: Լրագրողի նախապատրաստում զինված կոնֆլիկտի գոտի մեկնելուն: Նախնական տեղեկատվութուն: Լրացուցիչ տեղեկատվության ստացման հատուկ մեթոդիկաներ, փորձագետներ, ԶԼՄ-ների արդեն կոնֆլիկտի գոտում եղած ներկայացուցիչներ, ուժային կառույցների ներկայացուցիչներ, որոնց ջոկատները գտնվում են կոնֆլիկտի գոտում, համակարգչային բազաներ, դոսյեներ, Ինտերնետ: Զինված կոնֆլիկտի գոտում

գտնվելու եւ տեղաշարժի համար անհրաժեշտ փաստաթղթեր: Խմբագրության փաստաթղթեր: Գործուղման վկայական: Վտանգավոր գործուղման մեջ գտնվող լրագրողի միջազգային վկայական: Կազմակերպություններ, որտեղ կարելի է նման վկայական ստանալ:

Ինչ իրեր արժի վերցնել եւ ինչ պետք չէ վերցնել: Զինված կոնֆլիկտի գոտում կենցաղային պայմանների մասին տեղեկատվության անհրաժեշտություն: Մարտական գործողությունների գոտում մասնագիտական գործունեության իրականացմանն անհրաժեշտ միջոցների պաշար:

Դիտարկման եւ տեղեկատվության փոխանցման հատուկ միջոցների մտածված ընտրություն. զինված կոնֆլիկտի մասնակիցները կարող են այդ միջոցները նույնականացնել «լրտեսական» սարքերի հետ: Գերության մեջ հայտնված լրագրողների վարքագծի հիմնական կանոնները: Ինչ կարելի է ձեռնարկել «թեժ կետերից» վերադառնալով:

## Հանձնարարելի նյութեր «Կոնֆլիկտների ժուռնալիստիկա» դասընթացի համար

### Հայերեն գրականություն

| | |
|---|---|
| Զանգվածային տեղեկատվության բնագավառը Եվրոպայի Խորհրդի փաստաթղթերում | Երեւան 2003 |
| Քաղաքական պայքարը եւ լրագրողի մասնագիտական բարոյականությունը | Երեւան 2000 |
| Լրագրողներն ընդդեմ ահաբեկչության եւ բռնությունների | Երեւան 2000 |
| «Արտակարգ» թերթ | |

### Ռուսերեն գրականություն


1. Андреев В.И. Конфликтология, искусство спора, ведения переговоров, разрешения конфликтов. Казань, 1992.
2. Анцупов А.Я., Малышев А.А. Введение в конфликтологию. Ужгород, 1995.
3. Анцупов А.Я., Шипилов А.И. Конфликтология: теория, история, библиография. М., 1996.
4. Бабосов Е.М. Конфликтология. М., 1997.
5. Бандурка А.М., Друзь В.А. Конфликтология. Харьков, 1997.
6. Белкин А.С, Жаворонков В.Д., Зимина И.С.. Конфликтология: наука
o гармонии. Екатеринбург, 1995.
7. Гиляров Е.М. Конфликтология. М., 1995.

8. Громова О.Н. Конфликтология. М., 1993.
9. Данакин Н.С. Конфликты и технологии их предупреждения. Белгород, 1995.
10. Здравомыслов А.Г. Социология конфликта. М., 1996 (3-е изд.).
11. Иванов В.Н., Смолянский В.Г. Конфликты и конфликтология. М., 1995.
12. Иванова Е.Н. Эффективное общение и конфликты. СПб-Рига, 1997.
13. Канатаев Ю.А. Психология конфликта. М., 1992.
14. Кандыбо В.И., Басков В.П. Введение в конфликтологию. Ярославль, 1993.
15. Колесова Е. Причины современных межэтнических и межконфессиональных конфликтов. М., 1996.
16. Коновалов В.В. Конфликт. Л., 1988.
17. Котанджян Г.С. Грани согласия-конфликта: цивилизационные проблемы теоретической и прикладной политологии. М., 1992.
18. Крогиус Н.В. Личность в конфликте. Саратов, 1976.
19. Е.Н.Ивановой. Рига-СПб, 1995.
20. Лефевр В.А., Смолян Г.Л. Алгебра конфликта. М., 1968.
21. Ликсон Ч. Конфликт. Семь шагов к миру. СПб, 1997.
22. Пронин С.В., Давыдов А.П. и др. Социальные конфликты в современном обществе. М., 1993.
23. Растов Ю.Е., Трофимова Р.А. Конфликтология. Барнаул, 1995.
24. Рыжов О. Политические конфликты. М., 1997.
25. Рябцев В.Н., Сафарян С.М. "Карабахский узел": этнонациональный конфликт в аспекте региональной геополитики. Ростов-на-Дону, 1996.
26. Саркисян Б. Победа на переговорах. СПб, 1998.
27. Сафьянов В.И. Этика общения: проблема разрешения конфликтов. М., 1997.
28. Скворцов В.В. Способы разрешения конфликтов. М., 1986.
29. Скотт Дж.Г. Конфликты, пути их преодоления. Киев, 1991.
30. Социальный конфликт. Калуга, 1994-1998.
31. Тернер Дж. Теория конфликта // Дж.Тернер Структура социологической теории. М., 1985.
32. Тимофеева Л.Н. Политическая конфликтология. М., 1996.
33. Фельдман Д.М. Конфликты в мировой политике. М., 1997.
34. Фельдман Д.М. Политология конфликта. М., 1998.
35. Хасан Б.И. Психотехника конфликта и конфликтная компетентность. Красноярск, 1996.
36. Цепцов В.А. Переговоры: психология, воздействие, практика. М., 1996.
37. Цыганков П.А. Международные отношения. М., 1996 (Гл. Х1).
38. Черняк Е.Б. Вековые конфликты. М., 1988.
39. Чумиков А.Н. Управление конфликтами. М., 1995.
40. Шевцов В.М. Межнациональные конфликты: механизмы их разрешения. М., 1994.
41. Шибутани Т. Социальная психология. М., 1968.
42. Шейнов В.П. Конфликты в нашей жизни и их разрешение. М., 1996.

43. Шмидт Р. Искусство общения. М., 1992.
44. Щипков В.А. Введение в военную конфликтологию. М., 1996.

## Անգլերեն գրականություն

1. Anand R..P. Cultural Factors in International Relations. New Delhi, 1981.
2. Augsburger D.W. Conflict Mediation across Cultures: Pathways and Patterns. Kentucky, 1992.
3. Azar E.E. The Management of Protractive Social Conflict. Theory and Cases. Aldershot, 1990.
4. Azar E.E., Burton J. (eds.). International Conflict Resolution: Theory and Practice. Brighton, 1986.
5. Baylis J., Rengger N.J. (eds.). Dilemmas of World Politics. Oxford, 1992.
6. Bercovitch J. Social Conflicts and Third Parties: Strategies of Conflict Resolution. Boulder, 1984.Bloomfield L., Leiss A. Controlling Small Wars. N.Y., 1969.
7. Burton J. Conflict: Resolution and Prevention. London, 1990.
8. Danielyan Emil. Is There a Way out of Swamp. Yerevan 2000.
9. Darbinian Armen. Possibilities of Transcaucasian interregional co-operation.Yerevan 2000.
10. Enzenberger H.M. Civil Wars. London, 1993.
11. Fisher R., Ury W. Getting to Yes. N.Y., 1981.
12. Galtung J. Essays in Peace Research. Vol.1. Copenhagen, 1975.
13. Gulliver P.H. Disputes and Negotiations: A Cross-Cultural Perspective. N.Y., 1979.
14. Ikle F. Ch. How Nations Negotiate. N.Y., 1976.
15. Janis I., Mann L. Decision-Making. A Psychological Analysis of Conflict., Choice, Commitment. N.Y., 1977.
16. Kriesberg L. Social Conflict. 2-nd ed. N.J., 1982.
17. Lall A. Multi-Lateral Negotiation and Mediation: Principles and Practice. N.Y., 1985.
18. Lederach J.P. Beyond Prescription: New Lenses for Conflict Resolution Training Across Cultures. Waterloo (Canada), 1992.
19. Lederach J.P. Building Peace: Sustainable Reconciliation in Divided Societies. Tokyo, 1 995.
20. Lorenz K. On Agression. N.Y., 1974.
21. Luce R., Raiffa H. Games and Decisions: Intriduction and Critical Survey. N.Y., 1957.
22. Lovenheim P. How to Mediate Your Dispute. Berkeey, 1996.
23. Mitchell Ch.R. The Structure of International Conflict. N.Y., 1981.
24. Montville J. Conflict and Peacemaking in Multi-Ethnic Societies. Lexington,1990.
25. Princen T. Intermediaries in Conflict. Princeton, 1992.
26. Pruitt D., Rubin J. Social Conflict: Escalation, Stalemate and Settlement. N.Y., 1986.
27. Raiffa H. The Art and Science of Negotiations. Cambridge (Mass.), 1982.
28. Rapoport A. Fights, Games and Debates. Ann Arbor, 1960.
29. Schelling T. The Strategy of Conflict. Cambridge (Mass.), 1960.

30. Simonian Hayk. On the Caucasus Stability Pact Initiatives. Yerevan 2000.
31. Thomas K.W., Kilmann R.H. Thomas-Kilmann Conflict Mode Instrument. X1COM, inc., 1990.
32. Touval S., Zartman I.W. (eds.). International Mediation in Theory and Practice. Wash. (D.C.), 1988.
33. Ury W. & oth. Getting Disputes Resolved. San-Francisco, 1988.
34. Ury W. Getting Past No - Negotiating with Difficult People. *N.Y.,1991.*

## Ինտերնետային էջեր

1. www.ichd.org
2. www.emergency.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐԲԵՐԱ-ԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ
*Հեղինակ՝* ***Ժաննա ՄԽԻԹԱՐՅԱՆ*** 3

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԶԼՄ-ՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ XX ԴԱՐ
*Պատրաստվել է Երևանի մամուլի ակումբում* 10

ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
*Հեղինակ՝* ***Ռոզա ԵՂԻԱԶԱՐՅԱՆ*** 19

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ
*Հեղինակ՝* *Նաղաշ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ* 24

ՕՆ-ԼԱՅՆ ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Ուսումնական ծրագիր մագիստրատուրայի ուսանողների համար
*Պատրաստվել է Երևանի մամուլի ակումբում* 31

ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱ
*Պատրաստվել է Երևանի մամուլի ակումբում* 52

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

ԵՊՀ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Համալսարանների ժուռնալիստիկայի ֆակուլտետների համար

Պրակ 2

Տպաքանակը՝ 200